

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերեւագործակցան համայնքներ
ոչ առևտրային իրավասուրբան 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցածհարձան մեջադիով կամ կրիով
մեջդիով կամ ոչպատճով տոնա նյութը ստեղծելու համար նոր

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

564

8660

Ա. Ն. Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն. Յ. Ա. Ն.



ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

№ 4

Հ. Պ. Գ. „ՆՈՅԵՆԲԵՐ“
ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1926



ԱՆ. ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ն Ա Խ Ո Ր Յ Ա Կ Ի Ն

Դրամատիկ պատկերներ գյուղի կյանքից

(1918 - 1920)

618-57-

A I 8428



Գրառեպոզիտ № 458բ.

Տիրաժ 600

Տպարան ՀԵՐՄԵՍ Հրատարակչության Յերևան, Մարբուի փող. № 29

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Անուշափան Վարդանյանը մեկնեալն է այն սակավաթիվ հայ պրոլետարոհներին, վորոնք ունեն մինչհոկտեմբերյան պրոլետարատեման ստաժ և դուրս են յեկել բանվորութեան շարքերին: Իսկ այս սակավաթիվներին միջին նա գուցե միակն է, վոր աշխատել է և աշխատում է գրականութեան մի դժվար ճյուղում,— թատերագրութեան ասպարիզում:

Այդ տեսակետին, բնական է, վոր նրա պիեսները մի շարք արժեքավոր կողմերի հետ՝ ունենան նաև վորոշ թերութիւններ, մանավանդ, յեթե նկատի ունենանք, վոր պրոլետարական թատերագրութիւնը մեզ մոտ շունի անցյալ, համեմատած արձակի (Արագի, Մ. Պետրոսյան և այլն), նամանավանդ պոյեզիայի (Շ. Կուրղինյան, Ղ. Հակոբյան և այլն) հետ:

Անուշափան Վարդանյանը սկսելով իր գրական գործունեութիւնը վերոհիշյալ պրոլետարոհների հետ միասին՝ նույնիսկ անակցիայի սև տարիներին չի նահանջել պրոլետարական ուղիներից:

Իր ընտրած գրական սեռի, — թատերագրութեան բերմամբ, նա տեխնիկապես հնարավորութիւն չի ունենում գետեղելու իր գրվածքները, լրագրերում և ժուրնալներում, այն ժամանակ յուրաքանչյուր պրոլետարոհի համար առաջինների սյունյակները, իսկ վերջինների դռները նեղ լինելու պատճառով:

Յեւ ահա, ըստ հնարավորութեան նա սկսում է առանձին գրքերով լույս ընծայել իր աշխատութիւնները: Դրանց նյութը վերցված է թե բանվորական և թե գյուղացիական կյանքից և մշակված է միջավայրին ծանոթ մարդու հարազատ վերարտադրութեամբ:

1924 թվին, Ա. Վարդանյանի գրական գործունեության հո-
բեյանի առթիվ տպագրված «Գործադուլ կամ տղիտության գո-
հեր» պիյեսը այդ և այսպես, ինչպես նաև նրա «Բանդիաներ»-
ու մյուս աշխատությունները:

Ան. Վարդանյանի «Նախորյային» պիյեսը մի փորձ է գրա-
մախի ձևով վերարտադրել նոյեմբերյան հեղափոխության նախորյա-
կի իրադարձությունները մեր գյուղում: Ինչպես այս, այնպես էլ
Ան. Վարդանյանի մյուս աշխատությունների գրական կողմն այն
է, վոր նա իր առաջադրած խնդիրները լուծում է հարագատ միջ-
ջապարում, հարագատ շրջապատից առնված տիպերի միջոցով:

Ընդունելով, վոր ինչպես այս, այնպես նաև հեղինակի
մյուս գործերը զերծ չեն մի շարք թերություններից, գլխավորա-
պես գեղարվեստական, այնուամենայնիվ մենք կարծում ենք, վոր
դեռ նոր ստեղծվող հայ պրոլետգրական թատերագրության մեջ
Անուշավան Վարդանյանի այս աշխատությունները չեն կարող
չբռնել իրենց տեղը, իբրև առաջին քայլեր այդ ուղղությամբ:

Հ. Գ. Գ. «ՆՈՅՆՄԲԵՐ» ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ն Վ Ի Ր Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Խորհրդայնացման նախորդին
դառնակցական նացիոնալիզմի յեվ մաուզերիզ-
մի դեմ պայքարի մեջ՝ հոկտեմբերյան հեղափո-
խության դրոշմը ձեռքին ընկած մարտիկների
ճակերժ հիշատակին...

Ա. Վ.

Գ Ո Ր Ծ Պ Ղ Ա Ն Ձ Ի Ք

1. ԴԱՆԵԼ ԱՂԱ գյուղի իշխանավոր (կուլակ):
 2. ՎԱՐԺԱՊԵՏ
 3. ՏԻՐԱՑՈՒ
 4. ՔՅՈՒՎԱ
 5. ԳԶԻՐ
 6. ԽՄԲԱՊԵՏ
 7. ՉԱՔԱՐ չքավոր գյուղացի հողագործ:
 8. ԽԵՉԱՆ » » »
 9. ՄՈՒԿՈՒՉ » » »
 10. ԱՌԱՔԵԼ » » »
 11. ԹԱԹՈՍ » » »
 12. ՄԱԹՈՍ » » »
 13. ԹՅՈՒՆԻ, Չաքարի հայրը» » »
 14. ՀԱՍԱՆ » » »
 15. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ . . Դանել աղի գործակատարը:
 16. ՄԻՆԱՍ համագյուղացի, քաղաքից յե-
կած բանվոր:
 17. ՄԱՅՐԱՄ ԲԱԶԻ, Չաքարի մայրը:
 18. ԳՅՈՒԼՆԱԶ » քույրը:
 19. ՎԱՐԹԻ ԲԱԶԻ, Առաքելի կինը:
 20. ՔԵԹԽՈՒՂԱՆԵՐ, մատուցերիստներ, Դանել աղի ծա-
ռաներ և ժողովուրդ:
-

ԱՌԱՋԻՆ ՊԱՅԿԵՐ

Քեմք ներկայացնում ե գյուղի հանդր: Գարնան
Տաֆ յեվ պայծառ ուր ե: Հեռվից լսվում ե հանդ-
վորների խոսակցության ձայներ:

ՉԱՅՆԵՐ. — «Արա, յեզը քշիր: Ջեյրանին ձեն տուր, շուտ
արա, որը մթնեց... հո, հո Մարալ հո, Ջեյրան...»

(Իսկ մի ուրիշը յերգում ե)

Ահա ծագեց կարմիր արև

Տաք և պայծառ ե որը,

Դեհ քաշեցեք սիրուն յեզներ

Առաջ տարեք արորը...

ՏԵՍԻԼ 1.

ԴԱՆԵԼ ՅԵՎ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ.

ԴԱՆԵԼ. — Հը, ի՞նչ են ասում:

ՀԱՄԲԱՐ. — Դանել աղա, չեն համաձայնվում:

ԴԱՆԵԼ. — Վճեց թե, առաջարկությունս նրանք մեր-
ժո՞ւմ են, գնա կանչիր նրանց այստեղ:

ՀԱՄԲԱՐՉ. — Դանել աղա, կանչելդ զուր ա, նրանք իրանց
գործը մինչև չվերջացնեն, քունը չեն սկսելու:
Ընենց ա, հմի ազատություն ա...

ԴԱՆԵԼ.—Վո՞նց թե, ազատությունը նրանք ըտենց են հասկանում: Մեր յերկրում նրանց ըտենց ազատություն չի տրված: Խելքները թող հավաքեն գլխները, տեղներում դինջ նստեն: Թե չե նրանց գլխին ընենց մի ոյին կը կանգնացնեմ, վոր նրանք իրանց ազատությունն ել կմոռանան ու ամեն ինչ ել:

ՀԱՄԲԱՐ.—Նրանք ասում են, վոր ժողովրդին ուրիշ յերկիրներում ազատություն ա տրված, հողը՝ գյուղացիներին, գործարանը՝ բանվորներին վերադարձնելու որենք ա հրատարակված: Վոր եդ որենք իրանց ելա վերաբերում, իրանց վրա ել ա տարածվում...

ԴԱՆԵԼ.—Եդ ասողները շատ նհախ են անում, գլուխները քարոզն են տալի: Ուրիշ յերկիրների հետ մենք հաշիվ չունենք: Մենք մեր Հայաստանում մեր սեփական իշխանությունը, մեր սեփական որենքներն ունենք. վայ նրան, ով եդ իշխանությունը չի ճանաչի և նրա որենքներին չի հպատակվի: Ուրեմն դու ասում ես, վոր նրանք չեն համաձայնվում:

ՀԱՄԲԱՐ.—Չհամաձայնվիլը ըսենց ա, նրանք ուզում են առաջ իրանց գործը վերջացնեն, հետո քունը սկսեն:

ԴԱՆԵԼ.—Ուրեմն բանը ըտենց ա շուռ եկել, առաջ իրանցը՝ հետո իմը, լավ, թող ըտենց ըլի: Եդ մենք հետո կտեսնենք. թե մեզնից ով կփոշմանի, յե՞ս, թե նրանք:

ՀԱՄԲԱՐ.—Դանել աղա, յես ընենց իմանում եմ, վոր նրանք մեղավոր չեն...

ԴԱՆԵԼ.—Վո՞նց թե. ուրեմն մեղավորը յե՞ս եմ.

ՀԱՄԲԱՐ.—Վոչ ել դու յես. մեղավորը. եստեղ մի ուրիշ
մարդ ա, եդ մարդը դրուստ ա, մեր աչքին ինքը
չի յերևում, համա նրա արարմունքը, նրա բըռ-
նած գործերը ամեն տեղ յերևում ա: Դանել
աղա, դու եզ մարդուց մուղայիթ կաց. ընենց մի
ոձ ա, վոր մի գլուխ քու հետեվիցն ա պտտ-
վում... Յեթե դու նրան չփնասես, միևնույն ա նա
քեզ փնասելու ա:

ԴԱՆԵԼ.—Եդ ոձին կգցեմ վոտներիս տակ կտրորեմ,
նրա գլուխը կջարդեմ. դու նրա տեղը, նրա ով
ըլիւր միայն ինձ ասա:

ՀԱՄԲԱՐ.—Նրա տեղը, նրա ով ըլիւր դու ինձանից լավ
ես իմանում...

ԴԱՆԵԼ.—Հըմ. իմացա, իմացա...

ՀԱՄԲԱՐ.—Դե վոր իմացար, հըրեն քյոխվան վարժա-
պետի հետ կանգնած խոսում ա, ինչ անելու
յես, գնա նրանց հետ վախտին արա: Թե չես հետո
ուշ կլինի: Գիշերները նա գալիս ա հանդվորնե-
րին հավաքում ա գլխին, նրանց հետ խոսում,
գովացնում, նրանց խելքից հանում (Պոսելով դուրս
են գնում):

ՏԵՍԻԼ 2.

ՎԱՐԹԻ ՅԵՎ ՀԵՏՈ ԹՅՈՒՆԻ.

Վարթին ցախ ու փայտի կապոցը շալակին
յեվ մի սուփրի մեջ կանաչեղեն ձեռքին բըռ-
նած սնֆսնֆալով մսնոււ է:

ՎԱՐԹԻ.—Վոտներս բեզարել ա. ել կարում չեմ գնա:
Նստեմ եստեղ քիչ դինջանամ. (Շալակը զեր է դնում)

և նստում: Թյունին հացի մի մեծ գուլմաջ ձեռին ուտելով ներս ե մտնում):

ԹՅՈՒՆԻ.— Բարի աջողում, Վարթի բաջի, դու ես վախտին ըստեղ ի՞նչ ես շինում:

ՎԱՐԹԻ.— Ավելուկ եմ քաղել, տանեմ խաշեմ տամ յերեսեքը ուտեն, հաց չունենք... Սրանցով ենք յուր գնում... Գործդ չլինի՞ վերջացրել ես:

ԹՅՈՒՆ.— Հլա ո՞ւր ա, հանդի գործը դեռ նոր ա սկսվում: Եկա ախպրից ջուր խմելու նստա հացս ել կերա... Առ ես մի թիքեն ել պահի, կտանես կտաս թոռներդ կուտեն: (Վարթին չի վերցնում): Վերցրո՞ւ, Վարթի բաջի, ամաչելու, քաշվելու տարի չի... (Հացը տալիս ե Վարթուն, Վարթին վերցնում և դնում ե սուփրի մեջ):

ՎԱՐԹԻ.— Շնորհակալ եմ. աստոծ երգար որ ու ումբր տա, վոր ըտենց քու խեղճ տեղովդ յեթիմներիս համար ես մտածում: Բերանիդ թիքեն հանեցիր նրանց սովիր...

ԹՅՈՒՆԻ.— Եդ ինչ ասելու խոսք ա, Վարթի բաջի: Եդ մի թիքեն ել ավել կերած կամ պակաս, դրանով ի՞նչ ա ըլելու: Յեթիմներիդ կշտացնելու համար ալուրի ու ցորենի լիքը ամբար ա հարկավոր, եդ յես չունեմ:

ՎԱՐԹԻ.— Ունեցողն ել չի տալի...

ԹՅՈՒՆԻ.— Չեն տա, Վարթի բաջի, չեն տա... Ո՞ւմ ինչ վեճն ա, թե աշխարհը սովից կկոտորվի: Ո՞ւմ ինչ վեճն ա, թե քու յեթիմները քուչեքումը թափված շների բերանից վոսկորներ են խլում, իրանք ուտում: Ո՞ւմ ինչ վեճն ա, թե մեր անտուն ու անտեր հասուն աղջկերքը խուլ ու մութ տեղերում

մի կտոր ցամաք հացի համար իրանց պատիվը նամուսն են ծախում... Ախ, Վարթի բաջի, ասելու բան շատ կա, համա ամեն բան ասիլ չի ըլում...

ՎԱՐԹԻ.—Ամեն բան ասելու համար լեզուներս կապված ա, բերաններս փեչատած...

ԹՅՈՒՆԻ.—Ըտենց ա, Վարթի բաջի, ըտենց ա: Ամեն մի տեղից վեր կացող չաթ ու քյասան մաուզերը կապել ա կողքին, պատրոնները շարել գոշին, նրանց առաջին ձեն հանել, խոսալ չի ըլում: Գլուխները տաքացրել են, աչքերը արնով լցրել: Կովի համար նրանց ջանը յեռ ու քոր ա գալի, կռիվ ել վոր չլինի, նրանք մեզ համար զոռով կըռիվ կատեղծեն, որ չի ըլում, վոր մի թուրքի գեղ չքանդեն, ու նրանց ունեցած չունեցածը թալանեն... Բեյուքվերդու կռիվն ասեմ, Զանգի-բասարա թալանն ասեմ.. Վճր մեկն ասեմ...

ՎԱՐԹԻ.—Երեխեքս եզ կռիվներում սպանվեցին, յեթիմներիս վիզը ծռած, ձեռքը ծոցներում թողին... (Լաց ե լինում): Մի աշխատող ձեռք դրանց վորին հասցնի... Խեղճ հալիվորս ինչ շարշարանքով, ինչ նեղությունով աշխատանքի ա դուրս գալի, նրան ել չեն թողում թե հանգիստ սրտով իր գործն անի... Որը տասն անգամ գալիս են յեղները ձեռքից խլում իրան ել հետը կոռ տանում... Պարտքի տակ խրվել ենք... տանը որվա ուտելու հաց չունենք... (Լաց ե լինում)...

ԹՅՈՒՆԻ.—Դարդ մի արա, Վարթի բաջի... սիրտդ պինդ պահի... նեղ որերի շեն որն ել կգա... յեթիմներիդ համար ել աստված ըղորմած ա...

ՎԱՐԹԻ.—Յեթիմներին աստված ել ա մոռացել, մարդիք ել...

ԹՅՈՒՆԻ.—Ըտենց չի, Վարթի բաջի, ըտենց չի... Յեթիմներիդ համար ել, մեզ համար ել մտածող մարդիք կան (ականջին): Եդ մարդկանցից մեզ մոտ ել են յեկել... նրանք ամեն տեղ ման են գալի, ամեն ինչ տեսնում են ու իմանում... նրանք մեզ անձար ու անիլլաջ չեն թողնիլ, ինչ վոր հարկավորն ա, նրանք կանեն...

ՎԱՐԹԻ.—Լսում ենք ու չենք տեսնում... (Շալակը վերցնում է):

ԹՅՈՒՆԻ.—Կտեսնենք, Վարթի բաջի, կտեսնենք... Եդ որերը մեզնից շատ հեռու չեն... Եդ որերը մեզ համար շուտով կգան... ես նոր կառավարությունները երգար չեն դիմանալու, եսոր եզուց ա... դրանք, իրար հետեից բաթմիշ են ըլելու, գնան կորչեն... Լսիր, Վարթի բաջի, յես ինչ վոր քեզ ասում եմ դու ուրիշին չասես.—ուրիշը թող չիմանա... (Խոսելով դուրս են գնում):

ՏԵՍԻԼ 3.

ՔՅՈՒՎԱ, ԴԱՆԵԼ, ՎԱՐԺԱՊԵՏ և ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

ՔՅՈՒՎԱ.—Դե ասեք տեսնեմ ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել...

ԴԱՆԵԼ.—Քեզ մոտ յես մի գանգատ ունեմ...

ՔՅՈՒՎԱ.—Գանգատդ հըմի լսելու և ես հանդում վճռելու գործ ամ, թե կարելի ա հետաձգել:

ՎԱՐԺ.—Հանդում ծագած վեճը հանդումն ել պտի քննվի ու վճռվի: Լսիր, քյոխվա, դու կառավարության

կողմից նշանակված, իրավունքի ու պաշտոնի տեր մարդ ես: Դու ի՞նչ պատիժ կտաս են մարդուն, յեթե տեսնես վոր եղ մարդը մեր կառավարութեան դեմ ա գնում և մեր որենքի հակառակ բան ա բռնում:

ՔՅՈՒՎԱ.— Ետենց շաշերի հետ յես գործ չունեմ...

ԴԱՆԵԼ.— Իսկ յեթե տեսնես, վոր եղ շաշը իր շաշութեանով ուրիշներին ել ա շաշացնում, նրանց խելքից հանձնում...

ՔՅՈՒՎԱ.— Ըտենց մարդուն շնքակոթից կբռնեմ, կգցեմ դամշուս տակ, ենքան կտամ, մինչև վոր խելոքանա...

ՎԱՐԺ.— Իսկ յեթե չխելոքանա ու իր իմացածը նա նորից շարունակի:

ՔՅՈՒՎԱ.— Վոտ ու ձեռը կկապեմ, կղրկեմ գժանոց, թող նրան ընդի բժշկեն:

ԴԱՆԵԼ.— Ըղորմի հորդ, լավ վճռեցիր. հենց ըտենց մի կապովի գիժ ա լուս ընգել ես հանդը ու ամեն գիշեր գալիս հանդվորներին հավաքում ա իր գլխին, նրանց ել գժվացնում:

ՔՅՈՒՎԱ.— Հըմ, իմացա թե ետ եշը ում ախոռումն ա գոում: Հախ աստու, դրա համար յես ել եմ մտածել, չունքի վոր եղ իշու քացին մի որ ել ինձ ա դիպչելու:

ՎԱՐԺԱՊԵՏ.— Ուրեմն հարկավոր ա, վոր եղ իշի պոչը վախտին խուզենք:

ԴԱՆԵԼ.— Խուզելով բան չի դառնա, հարկավոր ա եղ պոչը տակից կտրենք դեն գցենք:

ՔՅՈՒՎԱ.— Դուք ինձ են ասեք, նրան մեղադրելու փաստեր ունե՞ք, թե՞ հենց սրանից նրանից լսած դարդակ անհիմն խոսքեր ա:

ՀԱՄԲԱՐ.—Քյոխվա ջան, դրա համար դու ինձնից հար-
ցրու, նրան մեղադրող փաստեր ել ունեմ, վկա-
ներ ել: Հանգվորներին նա ինչ վոր ասել ա,
նրանց հետ նա ինչ վոր խոսել ա, յես ես թղթի
մեջ պաղրորնի գրել և նրա տակին ամենքին
ստորագրել եմ տվել:

ՔՅ ՈՒՎԱ.—Ձե, որենքի ձեերը լավ ես սովորել, Դանել
աղի կշտին քիչ ել վոր մնաս, դու մեր գեղում
լավ աղվակատու թյուն կանես:

ՀԱՄ.—Եղ շնորքն ել վոր շունենամ, Դանել աղան ինձ մի
սհաթ չի պահիլ: (Գրպանից մի լերկար գրութուն և հանում).
Ես գայավլենին յես գրել եյի, վոր ձեզ գրավոր
կերպով ներկայացնեմ: Դե վոր բանը ըսենց ե-
լավ, թողեք վոր իմ գրածը յես ինքս կարդամ:
(Կարդում է) «Հարգելի, մեծապատիվ պարոն
քյոխվա...


ԴԱՆԵԼ.—Այ շաշ, դու եղ նամակ ես գրել, թե գայավ-
լենի:

ՀԱՄԲԱՐ.—Ես առաջին մասը գրուստ ա նամակավարի
ա սկսվում, համա հետո գայավլենով ա վերջա-
նում...

ԴԱՆԵԼ.—Դու լավ կանես, վոր գայավլենով սկսես,
գայավլենով ել վերջացնես:

ՀԱՄԲԱՐ.—Դանել աղա, հենց ըսենց ել անում եմ
(կարդում է). «Ձեր ազնիվ ուշադրութունն եմ
հրավիրում քաղաքից նոր յեկած մեր գեղացի
Մինաս անունով մի վոմն, Տիրոջ հավատարիմ
ծառա, վոտներ լիզող գյաղա, կամակատար
ստրուկ...» Հն չմոռանամ ասել, վոր ես անվայել

խոսքերը նա ինքն ա ինձ ասել, ու հմի նրա եղ
ասած խոսքերը նորից յես իրան եմ վերադարձ-
նում...



ՔՅՈՒՎԱ.—Եղ խոսքերը լավ կանես վոր դու մեզ սկի
չասես, եղ խոսքերը ինձ համար բոլորովին հե-
տաքրքիր չի:

ՀԱՄԲԱՐ.—Ձեզ համար, քյոխվա ջան, կարող ա պա-
տահի վոր հետաքրքիր չնի, համա Դանել աղի
համար յես կարծում եմ, վոր հետաքրքիր կլինի:

ԴԱՆԵԼ.—Դանել ազան ըտենց ախմախ բաների համար
գլուխ չի կոտրում. թե ուրիշ բան իմանում ես
ասա:

ՀԱՄԲԱՐ.—Դանել ազա, հենց ըտենց ել անում եմ:
(Կարդում ե) Իմ ազնվության, իմ հավատարմու-
թյանս համար նա ինձ տիրոջ հավատարիմ ծառա,
վոտներ լիզող գյաղա ա անվանում...

ՔՅՈՒՎԱ.—Քեզ ասեցին, վոր եղ խոսքերը թող մնա,
դու մեզ են խոսքերն ասա, ինչ վոր նա հանդվոր-
ներին ե ասել:

ՀԱՄԲԱՐ.—Քյոխվա ջան, հենց ըտենց ել անում եմ:
(կարդում ե) Յես կը հաստատեմ, վոր նա իմ մա-
սին...

ՔՅՈՒՎԱ.—Քեզ բան եմ ասում, ելի դու քու եջն ես
քշում...


ԴԱՆԵԼ.—Հազար ասա, նրա բեյինը չի մտնիլ...

ՀԱՄԲԱՐ.—Դանել ազա, հենց ըտենց ել անում եմ:

ԴԱՆԵԼ.—Այ դահրումար դառնա քու ըտենց անիլը. եղ
զխկումը դեսը տուր, ինչ վոր ասելու յես բերա-
նացի մի երկու խոսքով ասա, վերջանա գնա: Ել

67 887

8648



ի՞նչ ես կանգնել շարականի պես ոխտը սհաթ
յերգարացնում: (Թուղթը ձեռքից խլում եւ կ պատում):
ՀԱՄԲԱՐ.—Նա ամենից առաջ ուժից ընկած հողերը
պարարտացնելու և նրանցից առատ բերքը ստա-
նալու մասին ա խոսել: Ես հլա մեկ: Հետո իրա
խոսքերով վոր ասեմ «փոխադարձ ոգնության»,
«համայնական աշխատանքի», «միության—համե-
րաշխության» մասին ա նրանց ասել ու հաս-
կացրել...

ՔՅՈՒՎԱ.—Բավական ե, ել մի շարունակի: Դանել ա-
ղա, նրա եղ ասածների մեջ, վոնց վոր դու ես
ասում, իշխանության հակառակ բան յես չեմ
տեսնում...

ԴԱՆԵԼ.—Եղ նշանակում ա, վոր նրա ասածների միտ-
քը դու լավ չես հասկանում: Վարժապետ, ըղորմի
հորդ, սրանց մի հասկացրու եղ խոսքերի միտքը:

ՎԱՐԺԱՊԵՏ.—«Համայնական աշխատանք, փոխադարձ
ոգնություն», «միության համերաշխություն» և
այլն և այլն... դուք հենց իմանում եք սրանք
հենց ընենց քամու բերած, կամ թե ախմախ
մարդու դարդակ գլխից դուրս եկած անմիտ ու
անիմաստ խոսքեր ա: Չե, սրանք մեկը մյուսից
մտածված, խոր միտք ունեցող գաղափարներ ա...
Եղ գաղափարները Ռուսաստանում բալշևիկներն
են հնարում, իսկ նրանց հնարած ամեն մի բանը
դուք գիտեք վոր հակապետական ա ու հակա-
որինական:

ՔՅՈՒՎԱ.—Եղ յես իմանում եմ:

ՎԱՐԺԱՊԵՏ.—Եղ վոր իմանում ես, են ել պոի իմա-
նաս, թե «համայնական աշխատանք», «փոխադարձ

ողնութիւն» ասած բանը ինչ ա նշանակում: Եդ նշանակում ա, վոր մեր գործը, մեր սեփական աշխատանքը, մեր տնձնական հաշիվները թողնենք ուրիշի գումերով զբաղվենք...

ՔՅՈՒՎԱ.— Ուրիշ խոսքով ուզում են, վոր մենք սոցիալիստ դառնանք. հա՛ հա՛ հա՛: —

ՎԱՐԺԱՊԵՏ.— Ամեն սոցիալիստ դու հենց իմանում ես ըտենց ա մտածում, չե, եդ մենակ բալչեիկներն են, վոր բանվորների և գյուղացիների պոչիցն են բռնել ու ել պոկ չեն գալիս... Յե՛վ աստված մի արասցե, դրանց խոսքը թե վոր լսել են՝ ընկնելու յին աշխարհը քանդեն շուռ տան, ունեւորներին ու իշխանավորներին կոտորեն, նրանց իրավունքն ու կարողութիւնը խլին...

ՔՅՈՒՎԱ.— Ուրիշ խոսքով ուզում ես ասի, վոր գրաժդանակի վայնա ռեվալյուցիա կատեղծեն:

ՎԱՐԺԱՊԵՏ.— Ներողութիւն, դու եդ մեկը սխալվում ես, ռեվալյուցիան վոր վերջանում ա, գրաժդանակի վայնան նրանից հետո ա ստեղծվում:

ԴԱՆԵԼ.— Եդ գրաժդանակի վայնան ել հո պակաս տընաքանդութիւն չի: Եդ կովի ձենն ել վոր լսեցին՝ պրծավ. քաղցած շների պես ամենքը մի կոնից վրա են պրծնելու, ընկնեն մեր ջանին, ելած չելածներս ձեռքներիցս խլեն... Աշխարհիս յերեսին ել վոչ հողատեր ա մնալու, վոչ փողատեր... Գեղումը ել վոնչ Դանել աղա կլի, վոչ գզիբ, վոչ տերտեր, ու վոնչ տիրացու...

ՔՅՈՒՎԱ.— Դա ըլելու բան չի. ռեվալյուցիա չե, թե գուղ մի մենծ յերկրաշարժ ըլի, սաղ աշխարքն ել, յեկինքն ել վոր քանդվի—կործանվի, Հայաս-

տանուժ քյոխվութիւնն ու գզրութիւնը, տերտե-
րութիւնն ու տիրացութիւնը մնացել ա, ելի կմնա...
Դրանք վերանալու բաներ չեն... Գնանք եղ լա-
կոտի գլխին ընենց մի ոյին կաղնացնեմ, վոր նա
իր բեվալուցիան ել մոռանա ու իր եկած ճամ-
բեն ել...

(Բոլորը միասին դուրս են գնում):

Տ Ե Ս Ի Լ 4

ԶԱՔԱՐԸ, ԽԵԶԱՆ, ԱՌԱՔԵԼ, ԹԱԹՈՍ, ՄԱԹՈՍ
ՅԵՎ, ՀԱՍԱՆ:

ԶԱՔԱՐ.— Զորա-զոռի աշխարհ ա. սրան խտրելով,
նրան կաշառելով լավ հողերը են գլխից մեր ձեռ-
քից գոռով խլել գավթել են, տակին մնացած են
քարոտ ու քոլոտ անպետք դուլթուն, վոնց վոր
մի թուլափայի, պցել մեր առաջը... Դե արի ջանդ
դուրս գա խեղճ գյուղացի, գշեր ցերեկ գնա տանջ-
վի չարչարվի, արևի ու անձրևի տակ արուն
քրտինք թափի, մատներով ու յեղունգներով եղ
հողը չանգռի, փորփորի, թե դրանից բան ա դուրս
գալու, վոր դու դրանով տանես տուն, սլահես ու
սաղ տարին ապրուստ անես...

ԱՌԱՔԵԼ.— Եհ, սե ըլի քյասիրի որը. ըսենց ըլել ենք,
ըսենց ել կսատկենք: Ես նեղ որից չելավ վոր մի
աչքներս բաց անենք:

ԶԱՔԱՐ.— Ծնված որից աչք ենք բաց անում, տան-
ջանքից ու թշվառությունից ավել ուրիշ բան չենք
տեսնում:— Գարունը սկսվելուն պես, յեզները ա-
ռաջներս արած հանդերումն ենք որ մթնացնում:

...Ռուս թագավորին թախսից վեր բերին,
նրա իշխանությունը բաթմիշ արին, մենք ուրա-
խացանք: Մենք ասինք՝ հս ա, աչք բաց կանենք
մեզ համար արխային ազատ ու հանգիստ կապ-
րենք, շունչ կը քաշենք: Համա ինչ դուրս եկավ...

ԽԵԶԱՆ.—Են դուրս եկավ, վոր մի ուս թագավորի
տեղ տասը հայ թագավոր ա գլխներխ նստել...
Թե մինչև որս տասը տարին մի անգամ եր կռիվ
պատահում, հըմի որը տասն անգամ կռիվ ա: Ի-
րար մորթում ենք ու իրար կոտորում... Ել վոչ
հարևան ազգ ենք ճանաչում, վոչ բարեկամ ժո-
ղովուրդ. իրար թշնամացել ենք, ել իրար յերե-
սի մտիկ չենք տալի:

ԱՌԱՔԵԼ.—Ըտենց ա, են որվանց ինչ ես կառավարու-
թյունը մոզոնեցին, կովից ել մենք աչք չենք
բաց անում: Ես զահրումար տեղը ուր վոր գնաս
սաղ որը թովի ու թվանքի ձեն ա մի գլուխ լըս-
վում ու ես քարի—են քովի տակ մարդկանց ջամ-
դաքները անմեղ տեղը թափվում:

ԹԱԹՈՍ.—Ընդուր ել մեր հողերից արունի հոտ ա
գալի, ե...

ԽԵԶԱՆ.—Մինասը ինչ վոր մեզ ասում եր, սուտ չեր
ասում:

ԶԱՔԱՐ.—Մի Մինաս չե, տասը Մինաս ել վոր մեզ
համար յերկնքիցը վեր գա, դուր ա... վոչինչ
չի ըլի: Աթարարա վոնց վոր տեսել՝ ընենց ել
գնում ենք: Իրար մենք չենք ճանաչում. մեր աշ-
խատանքը, մեր արուն-քրտինքը մենք չենք գնա-
հատում:

ԹԱԹՈՍ.—Հավ ես ասում, Զաքար ջան, ձեռքը պակաս
խալխ ենք, ախր մենք ի՞նչ կարանք անի:

ՉԱՔԱՐ.—Շատ բան, մենակ թե ուզենանք: «Գեղ կան-
գնի, գերան կկոտրի». ես խոսքի միտքը հասկա-
ցած վոր ըլեյինք, տասը լուծ յ'դ ու գութան
կունենայինք մեր ձեռքի տակ ու ըսենց չեյինք
դա վզներս ծռի, մեր բեզարած յեզների դինջա-
նալուն սպասի...

ՄԱԹՈՍ.—Ախպեր, եդ յեզն ել ջհանդամը, գութանն ել
դու հոդ ասա, հոդ. մենք հոդ չունենք:

Տ Ե Ս Ի Լ 5

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԳՁԻՐ

ԽԵՉԱՆ.—Չեններս վոր բարձրացնենք, եդ հոզն ել կու-
նենանք:

ԳՁԻՐ.—Չեններդ վոր բարձրացնենք դուք հենց իմա-
նում եք ձեր ձենը կտրիլը դժար ա: Կամ թե չե
ձեն բարձրացնելով դուք հենց իմանում եք նոր
հողարածանությո՞ւն ա ըլելու, ձեզ նոր հողեր
են տալու:

ՉԱՔԱՐ.—Ելածն ել մեր ձեռքից չխլեն, հոժար կամ-
քով մեզ ոչով հոդ չի տա...

ԳՁԻՐ.—Վոր չպահեք, ի հարկե կխլեն. ձեն կա վոր ես
քանի որս մեր կառավարությունը թուրքի հետ
կռիվ ա անելու. պատրաստ կացեք. վոր հրամանը
դուրս եկավ թե չե, կովի դուրս դաք... աստ-
ված մի արասցե, ես կովումն ել թե վոր հաղ-
թվել ենք, հավիտյանս հավիտենից կկորչենք...
Համա թե վոր հաղթել ենք, մեր ուզած ծովից-
ծով Հայաստանը կունենանք, ել դուք հողի պակա-
սություն չեք քաշի:

ՉԱՔԱՐ.—Են ճանապարհը վոր դուք եք բռնել, չե թե
ծովից ծով, յիս վախում եմ առվից առու Հայաս-
տանից ել զրկվենք...

ԳՁԻՐ.—Չենդ կտրի, թե չե կգամ, եդ գլխիդ ենքան
կտամ, վոր կստակես: Դե, դժեք ինչ եք կանգնել,
գնացեք արարեքը լծեք, քշեք գա: Եսոր դիվիդ
պտեք կոռ գնա:

ԱՌԱՔԵԼ.—Շատ վախտ ա, կոռ չեյինք գնացել. աչքնե-
րս լիս:

ԳՁԻՐ.—Դե, ել խոսալու վախտը չի, գնացեք յեզները
լծեք, քշեք գա... Մի բանը ձեզ տասն անգամ
չպտեմ ասի:

ԱՌԱՔԵԼ.—Մի յեզս վեր ա ընկել սատկում ա, լուծը
գետնին ա մնացել: Եդ հրաման տվողները լավ
կանեն, վոր հանեն մի քանի մանեթ փող տան,
գնամ մի յեզ առնեմ, վոր ըսենց ուզած վախտ-
ները առանց խոսալու դուս գամ:

ԹԱԹՈՍ.—Հրեն, խոփիս բերանը ծովել ա, դարբնին
դրստիլ տալու համար մի կոպիկ փող չունեմ: Եդ
հրաման տվողները դրա համար ըսկի մտածում են:

ԳՁԻՐ.—Դրանք դատարկ բաներ են:—Եսորվա կոռը սո-
վորական կոռերիցը չի. հրաման ա եկել, զորքը
տեղիցը շարժվում ա. նրա շեյ ու շույը հարկա-
վոր ա տեղափոխենք:

ԽԵՉԱՆ.—Աչքներս լիս, ելի կովի հոտ ա գալի.

ԱՌԱՔԵԼ.—Ինչ ուզում ա ըլի, յես կոռ չեմ դուրս գա-
լու. առանց են ել յեզս սատկում ա: Են անգա-
մին վոր կոռ չեյի գնացել, իմ յեզը եդ որը չի
ընգնի: Կոռի տված խերն ել եդ ա: Չեմ գնա:

ԹԱԹՈՍ.—Վոր ինչ ուզում ա ըլի, յես ել չպտեմ գնա.
գործս առանց են ել հետ ա մնացել:

- ԳԶԻՐ.—Եղ ի՞նչ խոսք ա թե չեմ գնա. կառավարութ-
 թյունը վոր իմանա, դրա համար գիտե՞ք ձեզ ի՞նչ
 կանի:
- ԲՈԼՈՐԸ.—Ի՞նչ ուզում ա թող անի:
- ԳԶԻՐ.—Գժվել եք, ի՞նչ ա, դուք եղ ի՞նչ դայդի եք
 խոսում:
- ԶԱՔԱՐ.—Ի՞նչ դայդի ենք խոսում:—Մի ասող ըլի, ել
 ինչ կառավարություն ա, վոր իրա գորքը տեղա-
 փոխելու միջոցներ չունի:
- ԽԵԶԱՆ.—Դե վոր չունի, թող խելքը հավաքի գլուխը՝
 տեղումը դինջ նստի: Ի՞նչ ա որը մի անգամ կը-
 ոխվ սարքում, խալխին կրակի մեջ գցում:
- ԲՈԼՈՐԸ.—Ձե մենք կոխվ չենք ուզում:
- ԳԶԻՐ.—Տո ձեզ ո՞վ ա հարցնում ուզում թե չեք ու-
 գում. հալրաթ հարկավոր ա վոր կովում են:
- ԱՌԱՔԵԼ.—Եղ կոխվ ուզողները թող իրանք դուրս գան
 իրար հետ կովեն...
- ԽԵԶԱՆ.—Եսքան կովել ենք՝ կովից մենք ի՞նչ խել ենք
 ստացել...
- ԲՈԼՈՐԸ.—Ձե, մենք կոո չենք գնում, կոխվ չենք ու-
 գում... (Մուկուչը լաց լինելով մտնում է)
- ԶԱՔԱՐ.—Հը, ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել...
- ՄՈՒԿՈՒԶ.—Մինասին բռնեցին տարան...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Պ Ա Տ Կ Ե Ր Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Բենք ներկայացնում է գյուղից- դուրս գտնվող գոմերը: Գեղնափոր նկարը. մի դուռ յեվ մի փոքրիկ ու նեղ լուսամուտ: Առնան ցուրտ յեվ խավար գիշեր է: Պատի դարակի վրա դրված է ձիթի նրագ, վոր իր աղոտ լույսով լուսավորում է գոմը: Գուրսը սաստիկ ֆամի յե յեվ փոքորիկ: Գյուղացիները բուխարու առաջ նստած սափա- նում են ու զրուցում, իսկ Հասանը մի կողմ ֆա- ված ֆնած է:

Տ Ե Ս Ի Լ 1

Մ ՈՒԿՈՒԶ, ԶԱՔԱՐ, ԽԵԶԱՆ ՅԵՎ ՀԱՍԱՆ.

Մ ՈՒԿՈՒԶ. — Ի՞նչ ես անում խեղան, փճԼՖ. աչքերս քո- սացրիր. ետ զահրումար ծուխը դենը կորցրու- դրա տված տաքությունը հուզեցինք:

ԽԵԶԱՆ. — Արա դե յես փճնց անեմ, վոր ծուխը դեսը չգա: Ես զահրումար փետերը դրստեմ բալքի վառ- վի քիչ տաքանանք, ցրտից մեռանք: Արա Զաքար դու ի՞նչի ես շվարած մնացել. թե քունդ տանում ա, գլուխդ դիր եդ քարին քիչ վախտ քնի դին- ջացի, մինչև նրանք ել կգան:

ՀԱՍԱՆ. — Պան, պան, զահլա տարան ելի. չթողին թե մի հալալ քնեմ: Արա բա դուք չեք տեսնում ըս-

տի քնած մարդ կամ. յանի քիչ վոր կամաց ձեն
հանեք ինչ կլնի: (Գլուխը ափերի մեջ առած քնում է)

ՉԱՔԱՐ.— Գեղամիջին ձեններս կարում են հերիք չե,
ես չորումն ել ձեն չպտի հանենք: Ըստի ել հո
քեոխվա գղիը չկամ գլխներին կանգնած, ինչ ես
սրտածաք ըլում:

ԽԵՉԱՆ.— Ես ինչի են ուշանում. ինչի չեն գալի:

ՄՈՒԿՈՒՉ.— Հիմի վորդի վոր ա կգան. (դուռը ծեծում են)
չասի՞ վոր հմի վորդի վորա կգան: (Գնում դուռը
բաց է անում):

Տ Ե Ս Ի Լ 2

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՔԵԼ ՅԵՎ ՄԱԹՈՍ

ԱՌԱՔԵԼ.— Բարի աչողում.

ԽԵՉԱՆ.— Այ ասու բարին, բարով եկաք. նստեք բու-
խարու առաջ տաքացեք. մրսած կլնեք:

ՄԱԹՈՍ.— Մբսել ենքն ել խոսք ամ. սառել փետացել ենք:
Անասելի ցրտեր ա անում: Արա Չաքար, Մինասի
փախնիլը դրուստ ամ:

ՉԱՔԱՐ.— Տնաշեն եդ յերբ ամ ըլել, դու հլա նոր ես
խմանում. նա վոր փախած չլիներ, նրա գլուխը
սրանք վաղուց կերած կլնեին:

ՀԱՍԱՆ.— Աչքս լիս. սրանք քիչ եին գլուխս տանում
նրանք ել եկան ավելացան:

ԱՌԱՔԵԼ.— Նրա խոսալը վոր մի մի անգամ միտս ա
գալի, սիրտս մղկտում ա: Տնաշենը բազի բիր մի
ընենց բան եր ասում, վոր կասես տասը տարի
հեռներս նստել ապրել ա, մեր խոսքն ու ջուղարը
լսել իմացել ա:

ՄԱԹՈՍ.— Սուտն ու ըղորթը խարար չեմ, համա ա-

սուժմ են վոր նա մեր գեղը ուրիշ նպատակով եր
եկել:

ԽԵՉԱՆ.—Գեղը գալու համար նա չեր մտածել, վոր
պտի եղ խոսողներից առաջուց իրավունք վերցնել:

ՄՈՒԿՈՒՉ.—Դրուստ ա: Մեր գեղում նրա համար շատ
մարդ շատ բան եր խոսում:

ՉԱՔԱՐ.—Վոր խոսում են ամեն մի խոսքին պետք ե
հավատամ:

ՄԱԹՈՍ.—Խոսքը մեր մեջ մնա, նրա համար ինչ վոր
ասելին, հավատալու յեր: Նրա եկած որվանից նրա
թհար-թհուրիցը երևում եր թե նա ինչ խելքի ու
մտքի տեր մարդ ա: Հալթաթ նա իր մտքումը մի
բան ուներ վոր գիշերները գալիս եր ձեր կշտին
մնում: Չավողներում բան արած, զարաստովկի
սովոր մարդ եր, նրանից խաթան պակաս չեր:
Նրա գլխին թե վոր ետ բանն ել չպատահեր, աս-
տոժ գիտե նա՝ մենք Սիրիբը գեան եինք
թողնալու: (Մյուսները ծիծաղում են): Ի՞նչի եք
ծիծաղում. մի անգամ քյոխվի հետ յես նրան
խոսելիս տեհա, մնացի շվարած: Ետ տնաքան-
դը վախ ասած բանը չեր իմանում: Խոսքե-
րը կարկուտի նման վրա եր տալի, աչքերիցը
կրակ թափում: Քյոխվի բերանի թուքը ցամա-
քել եր, լեզուն կապվել. մի խոսք ելա՝ չկարաց ա-
սի ու նրա ջուղարը տա:

ԱՌԱՔ.—Յես զարմանում եմ, վո՞նց ա քյոխվան համ-
բերել, դամչին չի քաշել շնկոթին տալով տա-
րել դուստաղ արել:

ՉԱՔԱՐ.—Դու արխային կաց. նա իմանում ա ո՞ւմ հետ
ինչպես կվարվի:

ՄԱԹՈՍ.— Եւ հաշվով դուսադն ու են անիծված դամ-
չին հենց մենակ մեզ համար ա ստեղծված:

ԽԵԶԱՆ.— Տունդ քանդվի, բա դու ետ նոր ես իմանում
Մեր գեղում քյոխվան ել, գզիրն ել, Դանել աղան
ել մեր կշտին են ասլան-ղափլան դառնում, վոր
լեզու չունենք: Լեզու իմացող, որենք հասկացող
մարդկանց տեսնելիս, նրանք դիփն ել պոչները
քաշում են, լեզուները կարճացնում:

ՀԱՍԱՆ.— Սրանց գլուխը յարար քարից ա շինած, թե
երկաթից. ախր եսքան խոսալում ինչա ածած
յես չեմ հասկանում: Մինչև ձեր գալը սրանք
սավետի պոչիցն եին բռնել: Մի տեսնայիք թե ին-
չեր էյին խոսում, ինչեր եին պատմում:

ՄԱԹՈՍ.— Չանգի ձենը հեռվից քաղցր ա լավում: Սը-
րանք հենց իմանում են թե սավետի յերկրում
ապրողները մեզնից լավ որումն են:

ՀԱՍԱՆ.— Սուտ բան ա. եշը ելի են եշն ա, մենակ թե
փալաննա փոխված:

ՄԱԹՈՍ.— Ուրիշների ասածներին թե վոր հավատալու
ըլենք, ըտենց ա: Նրան — ասում են, վոր սավետի
յերկրիցն ել մուռտառ տեղ աշխարհիս երեսին մի
տեղ ելա չկա: Վոր ետ դալմաղալներն ու խառ-
նակությունները դիփ դրանցից ա դուրս գալի:

ԱՌՍԲ.— Դրուստ ա ետ. ասում են, վոր միթամ Նիկոլի
վախտվա են շեն ու բոլ Ռուսեթը ել հմի չկա. ա-
մեն ինչ քանդել շուռ են տվել: Քարը քարի վրա
չեն թողել: Պատերազմը վերջացել ա, համա կռի-
վը չի դադարի: Սաղ որը իրար միս են ուտում,
իրար արինը խմում: Վոր նրանց մեջ ել մեծ ու

պատիկ չկա: Հարուստն ու քեասիրը իրար հա-
վասարովել են: Ընենց հազար ու մի բան են ասում
ես եկողները: Մեր միամիտ ժողովուրդն էլ նրանց
հավատում ա:

ՁԱՔԱՐ.—Ետ եկողներից մեկն էլ Մինասն էր, բա ետ
ինչի նրա ասածներին էլ չեին հավատում:

ՄԱԹՈՍ.—Ախր Մինասը են չեր ասում ինչ վոր ուրիշ-
ներն եին ասում:

ՁԱՔԱՐ.—Ուրիշները վոր նրանց խարուս են, նրանք
ուզում են վոր Մինասն էլ նրանց խարէր: Եղ ու-
րիշներին ձեռնտու չի, վոր խկությունը քան մեզ
ասեն: Խկությունը ասելու համար, նրանք մեզ-
նից շան պես վախում-դողում են:

ՄՈՒԿՈՒՉ.—Նրանք ուզում են, վոր մենք ուղտի ան-
կաճում քնած ըլենք, աշխարհից վոչինչ չխմանանք,
վոչինչ չհասկանանք: Հենց դրա համար էլ նը-
րանք մեզանից ամեն ինչ ծածկում է:

ԱՌԱՔԵԼ.—Նրանք վախենում են թե ամեն բան իմա-
նալուց հետո մեր միտքը փոխվի, դալմադալ բար-
ձրացնենք. դրա համար էլ նրանք մեզանից ամեն
ինչ ծածկում են:

ՁԱՔԱՐ.—Նրանք ուզում են, վոր մենք տեղներումս
դինջ նստենք, գլխներիս խփեն՝ ձեն չհանենք:

ԽԵՉԱՆ.—Ուշացել են. մեր միտքը նոր չի փոխվել:
Մրանք մեզ վառել թողել են: Ետ սուտ ու մուտ
խարարներով նրանք մեզ չեն կարա որես գենը
խարի. պրծանվ: Նրանց ստերի պոչը դուրս ա եկել
ամենքի աչքին երևում ա: Քու չենք, սավետի
որենքներն էլ ենք տեսնում, իշխանության որեն-
քներն էլ:

ԱՌԱՔ.— Այ կտրվի ըսենց իշխանությունն ել, ըսենց որենքներն ել Դադատանի սարերում թալան տվող մարդասպան գող ավազակները են չեն անում, ինչ վոր սրանք են անում: Սրանց քոքը կտրվի: Ես տնաքանդները կասես իստակ Նադիր շահի վեզիրներն են. ամեն մեկը մի տաս տասնհինգ հաս թիկնապահներ թաղի թուլի նման հետևներիցը գցած ման են գալի, վորտեղ մի ջահել կնիկ կամ մի սիրուն աղջիկ են տեսում, ել պրծավ, գլխին տալիս են զոռով փախցնում տանում:

ՉԱՔԱՐ.— Առաքել ամին սուտ չի ասում. են որը գըշերվա կեսին Իսկանդարանց Յենոքի դուռը կտորել եին մտել մարդու ծոցից կնգան քաշ տվել զոռով դուրս բերել հետները տարել, երկու որ պահել ճանփու դրել: Խեղճ մարդը ամոթու ձեն չի հանել, ուրիշներին բան չի ասել:

ՄԱԹՈՍ.— Կարա՞ ասի: Խեղճին կտան տեղն ու տեղը կսպանեն: Են անցկացած որը տունը չեմ եղել, եկել գոմից երկու թոխլի վերցրել տարել եին. եկա իմացա, ձեն չհանեցի: Խղճերն ու նամուսները կորցրած մարդիկ են, ի՞նչ կարաս անի:

ՀԱՍԱՆ.— Յես ուզում եմ իմանամ, ուրիշ տեղ ել սրանք եղ բաները անում են, թե հենց աչքերից հեռու ես խուլ ու մութ քունջ ու պուճախներումն արտենց բաներ կատարվում:

ԽԵՉ.— Տունդ շինվի: Յերևանու թատրոնումը չե՞ր վոր մտել եին մարդը կողքին նստած կնգա ձեռից բռնել զոռով դուրս բերե՞լ: Յերևանումը չե՞ր, վոր մավուղերը դրել եին ախպոր դոշին, պահանջել թե վոր ես գշեր քվորդ չբերես մեր տուն, քեզ

կապանենք: Հենց եղ Յերևանա բուլվարումը
չէր, վոր որը ցերեկով մի տասնութ տարեկան
աղջկա բռնել կանգնացրել էին թե վոտներտ հա-
նի շանց տո՛ւր:

ՀԱՍԱՆ.—Ախպեր, եղ վոր մեր թուրքերը արած ըլիին,
կասեին ըսենց-ընենց:

ԶԱՔԱՐ.—Չե, ել սրանից դենը համբերելու տեղ չկա:
Դանակը բիշերիս ա հասել. տարին տասներկու
ամիս սրանց ձեռին մենք յեսիլ չպըտենք մնա:
Սրանց կապը թամամ կտրվել ա. սրանց ելիլ-չլիլը
որես դենը ել մեզ պետք չի: Սրանցից հարկավոր ա
առաջ յախաներս թափ տանք ազատվենք: Մեր
ազատվելու հարցը, մեր ումիտը մենակ սավետն ա:
Ետ սավետն ա, վոր ես չարչարանքից ու նեղու-
թյունից մեզ պիտ փրկի ու ազատի: (Դուռը ծեծում են)
ԽԵՉԱՆ.—Դուռը բաց անենք տենանք ո՞վ ա (բաց ե անում):

Տ Ե Ս Ի Լ 3

ՆՈՒՅՆՔ ԹԱԹՈՍ ՅԵՎ ԹԻԻՆԻ

ՄԱԹՈՍ.—Կասես ամենքը եկել են. ել գուրսը մարդ
չի մնացել:

ԱՌԱՔ.—Մի քան հոգի ել կան, նրանք ել պտեն գա:

ԶԱՔԱՐ.—Ժողովը յետացնելու միտք չկա. ժողովը
մենք բաց կանենք մինչև նրանք ել կգան: Խոսքը
տանք Առաքել ամուսն: Առաքել ամի սկսի:

ԱՌԱՔ.—Ա՛խալիս, մեր ես տեղ հավաքվելու նպատակը
ձեզ բացատրելու կարիք չկա: Դուք եղ իմանում

եք: Դուք են ել եք իմանում, վոր մայիսի են
խառնված վախտը Մինասը իր բռնված տեղից
վոր փախավ, եղ անգամին ել ըստի եկանք հա-
վաքվեցինք, Մինասի ձեռքով խնդրագիրը դրկեցինք
սավետի յերկիրը... Եղ մարդը գնաց, ել պատաս-
խան չդարկեց: Հըմի նորից մենք հավաքվել ենք,
յերկրորդ խնդրագիրը դարկենք, եղ խնդրագիրը
գրած պատրաստ ա, թե կարիք կա մի անգամ ել
կարդանք...

ՔՈՂՈՐԸ.— Կարիք չկա. իմանում ենք... (Մուկուչը գուռը
ծեծում է, գնում են բաց են անում և դուռը կրկին կող-
պում):

Տ Ե Ս Ի Լ 4

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՄՈՒԿՈՒԶ.

ՄՈՒԿՈՒԶ.— Աչքներդ լիս նոր խաբար. Բագվիցը գա-
լիս են...

ԶԱՔԱՐ.— Արա դրճւտ ես ասում...

ՄՈՒԿՈՒԶ.— Սուտ ասելու ի՞նչ ունեմ... հրեա Մինասը
նամակ ա գրել... Ինքն ել եղ Բագվից եկող կար-
միր բանակի մեջն ա:

ԶԱՔԱՐ.— Նամակը տուր տեսնամ.

ՄՈՒԿՈՒԶ.— Առ վերցրու: (Ականջին) Մեջը գաղտնի բա-
ներ կա գրած, բարձր չկարդաս...

(Զաքարը վերցնում է նամակը, ճրագին մոտեցնում և մըա-
քումը կարդում է):

ԶԱՔԱՐ.— Մեր խնդրագիրը տարել ներկայացրել ա...
Շատ սիրով ընդունել են, խոստացել են մեզ ա-
մեն անսակ ոգնություն, աջակցություն ցույց

տան... Կարևոր գործով նա շուտով կգա մեզ մոտ.
դրա համար խնդրում աչ ոչովի բան չասենք...
Նրա գալը մեր ուղարկած խնդրագրի հետ կապ
ունի... Նրա նամակում գրած գրից եսքանը մեր
ես ժողովին ա վերաբերվում, իսկ մնացածը ար-
դեն ուրիշ բանի համար ա: (Սկսում ե մտքում կար-
գալ):

ՄՈՒԿՈՒՉ.—Նրանց մերը չմեռնի... Նրանք ձուկը գըլ-
խիցն են բռնել, թե մինչև որս նրանց արարեն
ճոճուալով յոխուշ եր բարձրանում, հիմի գոգուալի
յենիշ ա գնալու...

ԱՌԱՔ.—Նրանց շեկ մազերին, նրանց են պաճո քթին
ու կապուտ աչքերին դուրբան, ուր ա, մի թող
գան, ե... Յես նրանց եկած ճամբին, նրանց վտար
դրած հողին մեռնեմ, վոր ուր վոր գնում եմ մեզ
պես խեղճ ու կրակ, քյասիր խալխը աչք ա բաց
անում ու իր համար ազատ ու հանգիստ ապրում:

ԹՅՈՒՆԻ.— Ախ, ուրա, մի գան, ե, մեր աչքը նրանց
ճամբին ա մնացել...

ԹԱԹՈՍ.—Ես մենք ենք ասում, բա վրաստանը...

ՉԱՔԱՐ.—Սավետը վոր հասավ Բագու, վրաստանն ել
ա սավետական դառնալու, Հայաստանն ել, Պարս-
կաստանն ել, Հնդկաստանն ել, խելքդ ուր ա՞ գը-
նում... Մ ս ս, դուռը ծեծում են... (դուռը ծե-
ծում են):

ԽԵՉԱՆ.—Ես ով վոր ա, մեզնից չի, խամ մարդ ա,
դռանը մեր նշանով չխփեց...

ՄՈՒԿՈՒՉ.—Մինչև դուռը բաց անիլը հարկավոր ա մեր
խնդրագրի հետ Մինասի եդ նամակն ել մի պինդ
տեղ դնել պահել... Նրանց ձեռը ես թղթերը վոր
ընկավ, պրծավ. մեզ կբռնեն դիփիս կսպանեն:

Ա.Ռ.Ա.Ք.—Եղ երկուսն էլ տվեք ինձ յես կպահանամ:
(Վերցնում ե թղթերը դնում փափախի ներսի կողմից սա-
տառի մեջ և փափախը նորից դնում գլխին): Դե հըմի
դուռը բաց արեք, ով ուզում ա գա, գըշեր վախա
ա: Գոմի սաքվում քնել ենք: Ո՛ւմ ինչ գործն ա:
Դե էլ մի կանգնեք, դիփդ պառկեք, թող մեզնից
մեկը գնա դուռը բաց անի... (Դուռը նորից ձեռում
են, բոլորը պառկում են):

ԹՅՈՒՆԻ.—Դուք պառկեք, յես գնամ տեսնեմ ով ա...
(Մտանում ե դռանը): Եղ ով ա...

ՄԻՆԱՍ.—Յես եմ, դուռը բաց...

ԹՅՈՒՆԻ.—Դու ո՞վ ես, ես կես գըշերին դու եստեղ ի՞նչ
գործ ունես:

ՄԻՆԱՍ.—Ճամփորդ եմ...

ԹՅՈՒՆԻ.—Դու եղ ի՞նչ ճամփորդ ես, վոր դուզ ճամբեն
թողած, ես բուք ու բորանին ընկել ես չուերը,
բա դու չես իմանում, վոր սա գեղի գոմերն ա...
Քաշացի՝ ձորը, գեղ տանող ճամբով գնա ըստենը
ճամբա չկա... (Գալիս ե հետ):

ՄԻՆԱՍ.—Ղարիբ ոտարական մարդ եմ, գյուղը տանող
ճանապարհը յես չգիտեմ. գոնե ես գիշեր միայն
ինձ ընդունիր ներս, կամ դուրս յեկ, ինձ գյուղ-
տանող ճանապարհը ցույց տուր:

ՉԱՔԱՐ.—Եղ մարդու ձենը կասես ծանոթ ա թվում:
(Վեր ե կենում և վազելով գնում գոմի դուռը բաց անում):

Տ Ե Ս Ի Լ 3

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՄԻՆԱՍ

(Մինասը ծպտյալ կերպով ծերունու դիմակը դեմքին, յերկար շոմաղը բռնած մտնում է ներս և խորագնին կերպով նայում իր շորս կողմը):

ՄԻՆԱՍ.— Բարե ձեզ...

ՉԱՔԱՐ.— Մինաս ջան, դ՞ու՞ր յես...

ՄԻՆԱՍ.— Մ' ս' ս', լռի՛ր, իմ ով լինելը թող վոչ վոք չիմանա:

ՉԱՔԱՐ.— Մինաս ջան, միամիտ յեղի՛ր, ես տեղ յեղող-նեքը բոլորը մերոնք են, յադ մարդ չկա:

ԲՈՂՈՐԸ.— Վահ, Մինաս...

ՄՈՒԿՈՒԶ.— Վայ, յես քու հոգուն մատաղ...

ԽԵՉԱՆ.— Վայ յես քո ջանին մեռնեմ... (Բոլորը գրկախառնվում են և համբուրվում):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՊԱՏԿԵՐ ՅԵՐՐՈՐԴ

Բեւր ներկայացնում է Չափարի սան բակը, կիսաափուլ ցանկապատով օրջապատված: Ցանկապատի մյուս կողմը գյուղի մեծ հրապարակն է: Աւանն ուր է:

Տ Ե Ս Ի Լ 1

ԳՅՈՒԼՆԱԶ ՅԵՎ ՀԵՏՈ ՎԱՐԹԻ.

(Գյուլնազը ավելը ձեռքին բակն ավելում է և յերգում, իսկ Վարթին փողոցի կողմից նոր ներս է գալիս):

ՎԱՐԹԻ.— Գեղը տակից գլուխ ման եկա, յերկու ձու չկարացի ճարեմ, տանեմ տամ երեխենն ուտի: Խեղճ երեխենն հիվանդ ա, երկու որ ա նշխարք չի դրել բերանը: Աղջի, Գյուլնազ, բալքի դուք կունենաք:

ԳՅՈՒԼ.— Չունենք, Վարթի բաջի, վոր ըլեր կտայի. հրես քանի վախտ ա մեր հավերը ձվից կտրվել են, ել ձու չեն ածում: Վարթի բաջի, գնա մեր հարեանից հարցրու բալքի նրանք ունենան:

ՎԱՐԹԻ.— Նրանք ունենան ել չեն տա, կապենն դաշնիկների վրա թանգ գնով կծախեն:

ԳՅՈՒԼ.— Ըհ, հողս մեր գեղըցոնց պլուխը. տանը վոր մի ազիղ թիքա ունենում են դաշնիկների համար են պահում: Յերանի, յերբ են գնալու կորչեն:

դրանց գալուց գեղում թե ամեն ինչ պրծնում, և
և թե թանգանում:

ՎԱՐԹԻ.—Աղջի, փողավոր մարդիք են. սրտներն ինչ
վոր ուզում ա, առնում են ուտում. նրանք մեզ
նից զոռով չեն խլում:

ԳՅՈՒԼ.—Հենց եղ գահրումար փողն ա ամեն բան խա-
րար անում ե: Փողի զոռով ինչ ասես, վոր դրանք
չեն անում: Դրանց ջանը կրակ ընգնի, դրանց
սիրտը ետոր ձու ա ուզում, եպուց ինձ ու քեզ
կուզի. վոր փող ունեն մեզ պտեն առնի՞լ...

ՎԱՐԹԻ.—Միսդ քրքրվի, արուող կտրվի, թե եղ ասե-
լու խոսք եր վոր դու ասիր... Հրմիկվան ես ջա-
հելները պահ, պահ, պահ, ձխավորներին ձիուց վեր
կրերեն... (Դուրս ե գնում: Մարիամը ներսից մի ամա-
նով կուտ ե բերում, հավերին տա):

Տ Ե Ս Ի Լ 2

ԳՅՈՒԼՆԱԶ ՅԵՎ ՄԱՐԻԱՄ

ՄԱՅՐԱՄ.—Աղջի, Գյուլնագ. ի՞նչ բանի ես, շուտ արա
պրծի, գնա տնից են մեծ կարպետը դռշակի հետ
բեր, փռի եղ ծառի տակին: Քյոխվեն իրա մարդ-
կանցով ետոր ճաշին գալու ա մեր տուն:

ԳՅՈՒԼ.—Ըհ, հողս նրանց գլխին. քոռ աղքատի նման
տարին տասներկու ամիս ուրիշի դռներում են
ընկած: Կասես իրանց տանը ուտելու հաց չու-
նեն:

ՄԱՅՐԱՄ.—Աղջի, ձենդ կտրի, լեզուդ քեզ քաշի, ես
պատերը ականջներ կուսնան, կլսեն: Աղջի քո-
ռանաս, բա դու չես տեսնում, դրանց ձեռից ինչ

որն ենք քաշում: Սաղ որը վորսկան շների պես
 հոտոտելով ման են գալի, թե տեսնեն ումն են
 բռնում: Նրանց բերանը մինչև ոսկոր չպցեն, մեր
 Ձաքարին նրանք չեն թողնա մի որ գեղում մնա:
ԳՅՈՒԼ.—Ինչի՞, աշխարհը հո նրանց չի մնացել, գեղի
 տերն ու տիրականը հո մենակ նրանք չեն:—Հողս
 դրանց գլխին: Չենները քամակներին դրած սաղ
 որը պարապ սարապ ման են գալի հերիք չի, ու-
 բիշներին ել ուղում են բռնել:

ՄԱՅՐԱՄ.—Աղջի, լեզուդ քեզ քաշի, դու եղ ինչե՞ր ես
 խոսում: Դու եսոր գժվե՞լ ես, ինչ ա, բա դու չե՞ս
 իմանում, վոր իրավունքը նրանց ձեռքին ա, վոր
 նրանք ինչ ուզենան կանեն: (Գյուլնազը գնում է):
 Քոռանան դրանք, քանիսիտունն են քանդել, քա-
 նիսի ոջախի ծուխն են դրանք հանգցրել: Չո՛ւ,
 Չո՛ւ, Չո՛ւ... աղջի ես մեր հավերն ո՛ւր են չկան...
 (Ձաքարը փողոցի կողմից մտնում է):

Տ Ե Ս Ի Լ 3

ՄԱՅՐԱՄ ՅԵՎ ՉԱՔԱՐ

ՉԱՔԱՐ.—Եղ ի՞նչ ա, ո՛ւր ես տանում:

ՄԱՅՐԱՄ.—Կուտ ա, տանում եմ տամ հավերին:

ՉԱՔԱՐ.—Եղ կուտը դուք ձեզ համար պահեք. հավերդ
 թող կոտորվեն. դուք ձեր դարդը քաշեք: Հաց չի
 ճարվում, ճամբեքը բռնված ա, ել դեսը վոչինչ
 չեն թողնում թե անցի: (Գյուլնազը կարպետն ու դո-
 շակը բերում է, փռում ծառի տակ): Ա. մեր, դուք ես
 ի՞նչ բանի եք, ես ո՛ւմ համար եք պատրաստու-
 թյուն տեսնում:

ՄԱՅՐԱՄ.— Հերդ բա քեզ չի՞ ասել, վոր քյոխվեն իր մարդկանցով ետոր դալու ա մեր տուն: Հերդ նրանց ճաշին դոնադ ա կանչել:

ՉԱՔԱՐ.— Եդ հալիվորը իրա խելքը կորցրե՞լ ա, ի՞նչ ամենք մեզ համար ուտելու հաց չունենք՝ նա հրավերք ա սարքում, հետո սև ա կանչում... Չե, ս մեր սրանք հավաքեք տարեք, թող նրանք մեր տուն չգան: Նրանք մեր բարձի ուղողները չեն, նրանք մեր արինը ծծող թշնամիներն են... Նրանցից մենք ինչքան հեռու լինենք, ենքան լավ ա... Թխածներդ երկու փուխ հաց ա, եդ ել վոր դուք ետոր նրանց ուտեցնեք, տեսնենք եզուց դուք ի՞նչ եք ուտելու...

ՄԱՅՐԱՄ.— Մենք քար ուտենք, քացաղ ուտենք, մենք ամեն ինչից դուրկ մնանք, մենակ թե դու ազատ ըլես, քեզ ձեռք տվող, խոսք ասող չլի: Վախում եմ, Չաքար ջան, վախում եմ... Ամեն որ առավատ-իրիպու քուչի դուռը վոր բաց են անում, թուքը բերանիս ցամաքում ա, լեղիս ջուր կտըրվում... Ասում եմ ես ա՛ եկել են քեզ տանեն... Քեզ տանելուց հետո, տունս վոսկով լիքը ըլի, ինչիս ա պետք: (Լաց ե լինում):

ՉԱՔԱՐ.— Ա մեր, ելի դու սկսեցիր քու լացը, դուք ձեր լաց ու շիվանով ինձ ավելի եք շփոթում: Ախր յես ձեզ հարուր անգամ ասել եմ՝ մի բանը վոր ուղում եք անել, ինձ մի բերան իմաց արեք: (Մայրամը գնում է ներս, իսկ գյուղացիները փողոցի կողմից-մտնում են բակը):

Տ Ե Ս Ի Լ 4

ԶԱՔԱՐ, ԽԵԶԱՆ, ՄՈՒԿՈՒԶ, ԱՌԱՔԵԼ, ԹԱԹՈՍ ՅԵՎ,
ՄԱԹՈՍ

ՄՈՒԿՈՒԶ.—Արա Չաքար, քաղաք տեղափոխվելու միտք ունե՞ս:

ԶԱՔԱՐ.—Չգիտեմ:

ԽԵԶԱՆ.—Եղ լավ պատասխան չեր: Ուրեմն դու ուղճում ես գնաս:

ԶԱՔԱՐ.—Հանգամանքները թե վոր ստիպեն, ինձ հետ բալբի դուք ել եք գնում:

ՄՈՒԿՈՒԶ.—Եղ ստիպող հանգամանքները դու ծալի դրադ դի. գեղումը ծնվել, գեղումն ել պտի ապրենք ու մեռնենք: Քաղաք գնալը մտքիցդ հանի:

ԹԱԹՈՍ.—Քաղաքը լավ տեղ վոր ըլեր, դաչնիկները ամառը քաղաքը չեյին թողնի գեղը քա. գալուց ել հո աստված հեռու տանի. գեղի վրա ընենց սիրահարվում են, վոր գոռով ել դուրս անես չեն գնա:

ՄԱԹՈՍ.—Նրանք վոր յեկվոր են չեն գնում, բա մենք ինչ ասենք ու գնանք. խելքներս հացի հետ ենք կերե՞լ, թե գլխներիս ձի ա քացի տվել:

ԶԱՔԱՐ.—Զնջիլներով ել վոր նրանց կապես, ձմեռը նրանք գեղում չեն մնա:

ԱՌԱՔ.—Եղ մենք հասկանում ենք, մենք են ել ենք հասկանում, վոր մեր խեղճութունն ու քյասիրութունը գեղում վոնց վոր ըլնի քաչ ենք տալի, քյոչներս յոլա ենք տանում: Իսկ քաղաքում մենք եղ չենք կարա...

ՉԱՔԱՐ.—Շատերն են եղպես խոսել, համա են դահլըր-
մար քաղաքը ընենց մի ուժ ու գորություն ունի,
վոր ամենքին էլ դեպի իրան ա քաշում... Յես էլ
էյի առաջ ձեզ պես մտածում, հըմի իմանում եմ,
վոր մեր չարիս ու Ֆալագը եզ սարերից դենը
հեռու մեծ քաղաքներումն ա պտտվում, մեզ ոգ-
նող խոսքը են հեռու մեծ քաղաքներիցն ա լրս-
վում... (Գլուխն ասերի մեջ առած նստում է ու մտա-
ծում):

Մ ՈՒԿՈՒԶ.—Զաքար, եսոր քեզ ի՞նչ ա պատահել, դու
ի՞նչի ես ըտենց դարդոտվել, մի վախի, դու ես-
տեղ մենակ չես, քու քամակին մենք սարի պես
կանգնած ենք, Դանել աղան թե վոր ամեն տեղ
իր փողի ուժն ա շանց տալի, հալրաթ մենք էլ
մեր կռնի ուժը նրան մի որ շանց կտանք:

ԽԵՉԱՆ.—Ախպեր, սա գղակ չի վոր մենք ենք ծած-
կում, սա նամուս չի, վոր մենք ենք տանում:
Գնանք եզ հրեշին տանք, շան սատակ անենք,
տուն ու տեղը քանդենք հիմնահատակ անենք...
Նրա ցորենի են լիքը ամբարը նավթ լցնենք վա-
ռենք, բալքի գեղը նրա ձեռքից ազատվի:

ՉԱՔԱՐ.—Դրանով դուք վոչ Դանել աղին կպատժեք,
վոչ էլ գեղը նրա ձեռքից կազատեք: Դանել ա-
ղան մենակ ինքը մեղավոր չի, մեր ես որենքներն
ա, վոր նրան գել ա դարձրել, մեզ պես անլեզու
վոչխարներին գզգզելու համար:

Մ ՈՒԿՈՒԶ.—Եզ գելի ստամբները մենք կտանք կջար-
դենք...

ՆՈՒՅՆՔ, ՔՅՈՒՎԱ, ՏԻՐԱՑՈՒ, ՎԱՐԺԱՊԵՏ, ՔԵԹ-
ԽՈՒԴԱ ՅԵՎ ԹՅՈՒՆԻ:

ՄԱԹՈՍ. Չաքար ջան, թե հացդ պրծել ա, մի մեշոկ
ցորեն յես մի տեղից ճարել եմ, կեսը քեզ կտամ:

ԹԱԹՈՍ.—Մի պարկ այլուր ել յես կտամ:

ՉԱՔԱՐ.—Վոչ քու եզ մի մեշոկ ցորենն ա քեզ սաղ
տարին հերիք անելու, վոչ ել քու են մի պարկ
ալյուրը իմ յարեն սաղացնելու: Սա որ չի, վոր
մենք ենք ապրում, սա կյանք չի, վոր մենք ենք
քաշում: Գետնի են մրջյունները ցորենի մի-մի
հատիկ հավաքելով իրանց համար տարվա պա-
շար են պատրաստում, իսկ մենք վոր ցորենը
բեռներով ենք արտերից կրել՝ տանը որվա ուտե-
լու հաց չունենք...

ՔՅՈՒՎԱ.—Տիրացու, դու կգիտենաս եզ ինչիցն ա,
յես ընենց իմանում եմ, վոր դրան մի պատճառ
կլինի...

ՏԻՐԱՑՈՒ.—Առանց պատճառի ես ծառի տերեն ել իր
տեղից չի շարժվի: Քիչ վոր խորը մտածելու ը-
լենք, մենք կը տեսնենք, վոր մեր եստեղ գալն ել,
սրանց հավաքվիլն ել, Չաքարի ընենց երված
սրտով խոսիլն ել իրանց ջոկ-ջոկ պատճառներն
ունեն:

ՔՅՈՒՎԱ.—Հենց եզ պատճառն ա, վոր ես ուզում եմ
իմանամ:

ՏԻՐԱՑ.—Պատճառը են ա, վոր եզ մրջյունները որեն-
քից դուրս բան չեն բռնում. նրանք իրանց նախ-

նինքնորի ուղիղ ճամբեն չեն թողնում, սրանց պես
անհավատ կռապաշտների ծուռ ճամբովը գնում:
Նրանք իրենց բնում հազարներով հավաքվում են
իրար հետ սիրով ու համերաշխ ապրում: Իսկ հեր
ու վորդի, ախպեր ու քուր մի տան մեջ իրար
հետ յուր չեն գնում: Դրա համար ել աստոծ նը-
րանց գլխին տալիս ա, խեր ու բարաքաթը նը-
րանց բնից անպակաս անում:

ՉԱՔԱՐ. Սխալվում ես, տիրացու, նրանց պես մենք
եւ վոր ուրիշի վարելուն ու ցանելուն սպասենք,
մեր բունն եւ ցորենով լիքը կլինի: Համա մենք
ի՞նչ մեղավոր ենք, վոր առավոտը լիսը չբացված
հանդն ենք գնում, արուն քրտինք թափում, որ
ու գիշեր մաճն ու գերանդին ձեռներիցս վեր
չենք գցում և եսոր մենք քաղցած ենք մնում, նը-
րանք կուշտ... Ո՛ւր ա արդարությունը:

ՏԻՐԱՑՈՒ.—Արդարությունը ընդի ա, վորտեղ ձեր
միտքը չի հասնում, ձեր աչքը չի տեսնում:
Փորձանքը նեղ որերի հետ յերբ վոր գալիս ա
դոներիդ չոքում, դուք են վախտն եք միայն աս-
տըված մտաբերում: Մինչև վիզներդ խրվել եք
մեղք ու կրակի մեջ, աստծուն մտահան արել, սըր-
բերն ու յեկեղեցիները ուրացել... Չեզ դարձի բե-
րելու համար, չե թե ես նեղությունննրը, լերկն-
քից կրակ եւ վոր թափի ձեր գլխին, ձեզ համար
դա ելի քիչ ա:

ՉԱՔԱՐ.—Տիրացու, ես աշխարում բա եւ ուրիշ մե-
ղավոր մարդիկ չկան, հենց մենակ մենք ենք:

ՏԻՐԱՑՈՒ.—Բա վոնց չկան, դժողքն ու վերջին ահեղ
դատաստանի որը բա եւ ո՞ւմ համար ա: Ենտեղ
ամենքը իրանց մեղաց պատիժն են կրելու:

ՉԱՔԱՐ.—Աստու անունից ել պատիժ ու կրակ չմնաց,
վոր շթափվեամեր գլխին: Ոհ, տիրացու, դրանք սուտ
բաներ ա, դրանք շինված ու թխված հեքիաթներ
ա, եդ հեքիաթներին հըմի ել ոչով չի հավատում:

ՏԻՐԱՑՈՒ.—Անքննելի ու անխմանալի ա նրա կամքն ու
խորհուրդը, համբերություն ունեցիր և կտեսնես
նրա արդարությունն ու վողորմությունը:

ՉԱՔԱՐ.—Ծնված որից համբերության քարոզներ ենք
լսում, համա ոգնություն, վողորմածություն մենք
բակի չենք տեսնում:

ՏԻՐԱՑՈՒ.—Անհամբեր մի ըլիր, Չաքար, նա բարի ա
ու վողորմած:

ՉԱՔԱՐ.—Նա բարի ա են մարդկանց համար, վոր չեն
վարում, չեն ցանում, բայց միշտ ել կուշտ են
ըլում:

ԹՅՈՒՆԻ.—Ախպեր, եդ խոսակցությունը թողնենք ու
տեսնենք, թե մեր տանտիկինը ինչի՞ համար ա
ձեզ կանչել, ի՞նչ ա ասում:

Տ Ե Ս Ի Լ Ե

ՆՈՒՅՆՔ, ՄԱՅՐԱՄ ՅԵՎ ԳՅՈՒԼՆԱԶ

ՎԱՐԺԱՊ.—Լավ ա ասում: Եդ խոսակցությունը մենք
թողնենք մի ուրիշ անգամվա համար, տեսնենք
մեր Մայրամ բաջին մեզ ինչի՞ համար ա կանչել
և ինչ ա մեզ ասում:

ՄԱՅՐ.—Մայրամ բաջին ձեզ պատվելու համար ա
կանչել: Նա ձեզ ուրիշ ասելու բան չունի: Դե
նստեք, վոր սուփրեն բերեմ գցեմ:

ԹՅՈՒՆՎԱ.—Այ եդ մեկը լավ ասեց: Դե եկեք նստենք:

ՔՅՈՒՆԻ.—Ա կնիկ, դե ի՞նչ ես բերելու բեր: (Բուրբ կարպետի վրա շարքով ծալապատիկ նստում են: Գուլ-նազը սուփրեն բերում է գցում: Իսկ գզիրը փողոցի կողմից վազելով ներս է գալիս):

Տ Ե Ս Ի Լ 7

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԳԶԻՐ

ԳԶԻՐ.—Քյոխվա ջան, շուտ արա հասի, կառավարու-թյան կողմից մարդ ա եկել քեզ ուզում ա տեսնի...

ՔՅՈՒՆՎԱ.—Պահ, դրա տունը քանդվի, եղ ի՞նչ փիս վախտ եկավ: Ա խալխ, դուք ինչի՞ եք նստել. կառարարության անդունը լսելիս ինչի՞ տեղներիցդ վեր չեք կենում: (Բուրբը վտռի են կանգնում): Այ տղա, դու գնա մի տեղից մի քանի հատ թոխլի ճարի, տար տուր թող պատրաստեն:

ԳԶԻՐ.—Վորտեղից ճարեմ, քյոխվա ջան:

ՔՅՈՒՆՎԱ.—Վորտեղից ուզում ես ճարի, իմ գործը չի: Գնա սաս, ով ունի թող տա:

ԳԶԻՐ.—Քյոխվա ջան, կգնամ, բա վոր չտան:

ՔՅՈՒՆՎԱ.—Վհնց թե չտան, եղ ի՞նչ խոսք ա, թե չտան: Եղ թոխլիքը յես ինձ համար չեմ ուզում, վոր չտան: Կառավարության կողմից եկած պաշտոնական մարդ ա, նրա համար ի՞նչ իրավունք ունեն չտալու: Թե բան ա՛ կհակառակեն ու չեն տա՛ մտի գոմը, զոռով բռնի դուս բեր, եղ իրավունքը յես քեզ տալիս եմ. դե ել մի կանգնի, գնա: (Գզիրը դուրս է գնում): Ա խալխ, դուք ել ինձ հետ եկեք, ձեր հետևից յես նորից մարդ չպտեմ դրկի: (Բացի թյունից բուրբը դուրս են գնում):

ԹՅՈՒՆԻ.—Ա կնիկ, սրանք հավաքի տար, ինչ վոր ու-
զում եյի, գլուխ չեկավ: Գնամ տենամ եղ եկողը
օվ ա, ինչ մարդ ա, ինչի համար ա եկել: (Դուրս
ե գնում):

Տ Ե Ս Ի Լ 8

ԳՅՈՒԼՆԱԶ ՅԵՎ ՄԱՅՐԱՄ

ՄԱՅՐ.—Եղ կառավարության մարդը եղ ինչ թարս
վախտ եկավ: Յերանի ինչի համար ա եկել:

ԳՅՈՒԼ.—Յա աղն ա պակաս, յա մաղը: Կառավարու-
թյան մարդը ել ինչի համար կգա, հողը դրանց
գլխին:

ՄԱՅՐ.—Աղջի, Զաքարին բռնելու համար չլինեն յե-
կած... Նրա համար վոր ըլեն եկած՝ յես ինչ հո-
ղը տամ գլխիս: (Լաց ե լինում):

ԳՅՈՒԼ.—Ա մեր, բանը չիմացած, դու ինչ ես կանգնել
լաց ըլում: Բալքի հենց ուրիշ բանի համար են
եկած:

ՄԱՅՐ.—Դե հավաքի, հավաքի, սրանք տանենք: (Հավա-
քում են ներս տանում):

Տ Ե Ս Ի Լ 9

ԶԱՔԱՐ, ԹՅՈՒՆԻ, ԱՌԱՔԵԼ, ՔՅՈՒՎԱ, ԳԶԻՐ, ԽԵ-
ԶԱՆ, ՄՈՒԿՈՒԶ, ԹԱԹՈՍ ՅԵՎ ՄԱԹՈՍ.

ԱՌԱՔ.—«Մուկը ծակով չեր մտնում, ցախավելն ել
պոչից կապեցին»: Մեր դարդը մեր ցավը մեզ հե-
րիք չեր, եղ հարկն ել մի կոնիցն եկավ ավելա-
ցավ:

ԲՈՂՈՐԸ.—Վոր ավելացավ տվողն ո՞վ ա... Ունենք վոր տանք:

ՔՅՈՒՎԱ.— Դե, ել կանգնիլ խոսալու վախար չի, գնացեք ճարեք բերեք:

ԲՈՂՈՐԸ.—Վորտեղից ճարենք, վորտեղից բերենք, տեսնում ես վոր չունենք:

ՔՅՈՒՎԱ.— Ունեք թե չունեք, նա եղ չի հարցնում, նա ինձ հրամայել ա, վոր ետոր մինչև իրիգուն հարկը հավաքեն իրան տան: Ել սրանից ավել նա ուրիշ բան չի ուզում լսի, չի ուզում հասկանա:

ԶԱՔԱՐ.— Մենք նրան կհասկացնենք:

ՔՅՈՒՎԱ.— Զաքար, դու քեզ մի քիչ կարգին պահի, եղ խոսքը նրա ականջը ընկնի՝ քեզ բռնել կտա:

ԶԱՔԱՐ.— Թո՞ղ բռնել տա, յես վոչ նրա ուսին դրած են ապելատներիցն եմ վախենում, վոչ ել սապոգի կրընկներին կպցրած զնզնզան շպորներից:

ՔՅՈՒՎԱ.— Զաքար, դու մտածի, թե ի՞նչ ես խոսում: Եղ խոսքերի համար ախր դու գիտես քեզ ինչ կանի:

ԶԱՔԱՐ.— Ինչ ուզում ա թող անի, կգնամ նրա առաջին կկանգնեմ, եղ խոսքերը նրա յերեսին կասեմ: Պաշտոնական մարդը եկել ա, թող գա մտնի մեր ես քանդված տները, իր քոռացած աչքիւրով տեսնի, թե մենք ինչ որումն ենք... Թե չե ինչ ա եկել յասավուլի պես դամշին վերցրել ձեռը, մի որվա մեջ հարկերն ա ուզում հավաքի, մեր չուլն ու փալասը մեր տակից հավաքի տանի:

ՔՅՈՒՎԱ.— Զաքար, դու հասկանում ես ինչ ես խոսում:

ԶԱՔԱՐ.— Յես հասկանում եմ, յես ուզում եմ, վոր իմ

ասածները ուրիշներն ել հասկանան, ուրիշներն
ել իմանան, վոր մեզ վոչ եղ եկողներն են հար-
կավոր, վոչ ել դրանց դեսը դրկողները: (Մտնում
ե իրենց բակը):

ՔՅՈՎՎԱ. — Դուք նրան անգաջ միք անի, նրա ասած-
ները դարտակ խոսքեր են, որենքը ձեզ ինչ վոր
հրամայում ա, դուք ընենց ել արեք: Գնացեք
ճարեք բերեք տվեք:

ԲՈՂՈՐԸ. — Ելած տեղից բերենք տանք, վոր չունենք
վճարտեղից տանք:

ՔՅՈՒՎԱ. — Ես ինչ անհասկ խալիս են: Ձեզ մի բանը
տասն անգամ հո չպտե՞ն ասիլ. հրաման ա՛ պտեք
տա: Թե մտքներումդ դրել եք, վոր չտաք, են ա
մի անգամից պարզ ու աշկարա ասեք, պրծնի
գնա, ել ի՞նչ եք գուր տեղը խալխին սար ու քար
զցում:

ԱՌԱՔԵԼ. — Կառավարության հարկը մենք չենք հակա-
ռակվիլ:

ՔՅՈՒՎԱ. — Բա ձեր խոսալը ել ինչի՞ համար ա:

ՄՈՒԿՈՒԶ. — Մեր խոսալը նրա համար ա, վոր դու-
գնաս եղ հարկը մի տարով հետաձգիլ տաս:

ՔՅՈՒՎԱ. — Անցկացած տարին մորեխը մհանա ա-
րիք, ես տարի սելափն ու կարկուտը: Եղ հաշվով
դուք մեր կառավարության հարկը չպտե՞ք տալ:
Վոր վիզս ել կտրեք ըտենց բանը յես նրան չեմ
գնա ասիլ:

ԲՈՂՈՐԸ. — Դու չես գնա մենք կգնանք... Ա խալխ,
գնանք:

ՔՅՈՒՎԱ. — Դուք գժվե՞լ եք ի՞նչ ա, ըտենց դավադա-
լով ճուր եք գնում: Նա վոր տեսնի ըտենց թա-

բունով իր կուշտն եք գնում, աստոծ գիդենա,
 թուրը կհանի շնքներդ թարս կկտրի: Յես իմ
 քյոխվա տեղովս, քյոխվության զնաչոկը ճտիս
 քաշ արած ելի սիրտ չեմ անում թե գնամ նրա
 առաջին կանգնեմ, երեսին ուղիղ մտիկ տամ: Իսկ
 դուք եղ քանի՞ գլխանի եք, վոր ուզում եք գնաք
 նրա հետ կանգնեք խոսաք: (Բացի քյոխվից ու գզրից
 բոլորը գնում են):

ՔՅՈՒՎԱ.— Դու գնա սրանց տուն, թե բան ա փող չեն
 ունենա, նրա տեղ փալաս փուլուսից ինչ վոր ձե-
 ուրդ կնգնի, վերցրու դուս բեր: (Ինքը գնում է, իսկ
 գզիրը մտնում է Ձաքարի բակը):

Տ Ե Ս Ի Լ 10

ՁԱՔԱՐ, ԳՁԻՐ, ՄԱՅՐԱՄ, ՅԵՎ ԳՅՈՒԼՆԱԶ

ԳՁԻՐ.— Ձաքար, ի՞նչ ես նստել մտածում, վեր կաց
 գնա, բալքիմ մի տեղից ճարես բերես. նստելով
 բան չի դուրս գա:

ՁԱՔԱՐ.— Յես գնալու տեղ չունեմ:

ԳՁԻՐ.— Ելի ինչքան չլինի, բալքի մի ումուզատեղ ու-
 նենաս:

ՁԱՔԱՐ.— Թե դու իմանում ես ասա... Յես չունեմ:

ԳՁԻՐ.— Բա հըմի ի՞նչ անենք...

ՁԱՔԱՐ.— Հրեն տունս, հրեն գոմս, մտիր ինչ ուզում
 ես արա:

ԳՁԻՐ.— Մայրամ բաջի, յեգներին ձեռ չեմ ուզում տա,
 գնանք բալքի տանը ընենց ավելորդ բան ու ման
 կուենաս, տուր տանեմ...

ՄԱՅՐԱՄ.— Կա վոչ. արևիդ գլխիդ դուրբան, կա վոչ. ա-
 վելորդ բան ախր մեղ ո՞վ ա տվել: Տըններիս ա-

ուանց են ել դատարկ ա, վրներս շոր չկա, տկլոր
ու չփլաղ ման ենք գալի: Մաներիցս կտրում բե-
րաններս ենք դնում, սև ու շիվան ու անցկացը-
նում: Են մի քանի կտոր չուլ ու փալասն ել
խարջի տեղ գաս դու տանես բա մենք ի՞նչ անենք
ի՞նչ հողը տանք գլխներին: Հավը ջուր խմելիս
յերկնքին ա մտիկ տալի: Ախր ըսենց բան չի
ըլի... (Լաց ե լինում):

ԶԱՔԱՐ.—Վոր մտիկ ա տալի պակաս են գլուխը կտը-
րում դեն գցում. գլուխ կտրելու տարի ա, ա մեր,
կուզես յերգնքին մտիկ տուր, կուզես գետնին:
(Մայրամի և Գյուլնազի հետ մանում ե տուն):

Տ Ե Ս Ի Լ 11

ԶԱՔԱՐ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԵՎ ԴԱՆԵԼԻ 2 ԾԱՌԱՆ

ՀԱՄԲԱՐ.—Բարով, Զաքար: Հը, խե՞ր ըլի, ինչի՞ ես
ըսենց տխուր. ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել: Չլինի՞
հարկը տալու համար փողի նեղություն ես քա-
շում: Տնաշեն, թե ըսենց բան կա ի՞նչի չես գա-
լիս, ինձ մի բերան իմաց չես անում. յես իմ
կողմից Դանել աղին մի բերան խնդրեմ, ինչքան
հարկավոր ա, կտա: Դու նրա նեղանալուն անգաջ
մի արա, նա շատ բարի մարդ ա, ձեռքից եկած
լավությունը նա քեզ համար չի խնայիլ:

ԶԱՔԱՐ.—Դե աղվեսություն մի արա, քեզ ինչի հա-
մար վոր դրկել են, դու գնա քու պարտականու-
թյունը կատարի. գզիրը հրեն, տանս ելած չելա-
ծը հարկի տեղ ա տանում, մնացածն ել դու գնա,
Դանել աղի պարտքի տեղը տար:

ՀԱՄԲԱՐ.— Հըմ... յես չեյի իմացել. բանը ուրեմն ըտե՞նց
ա ըլել: Դե, ել միք կանգնիլ, անցեք գործի: Լսիր,
դու գնա գոմը յեզները դուրս բեր, իսկ դու ինձ
հետ արի: (Մի ծառան գնում է գոմը, իսկ մյուսը Համ-
բարձումի հետ մտնում է տուն):

Տ Ե Ս Ի Լ 12

ԹՅՈՒՆԻ, ԶԱՔԱՐ, ՀԵՏՈ ՀԱՄԲԱՐԶՈՒՄ, ԳԶԻՐ, ԾԱՅ-
ՐԱՄ, ԳՅՈՒԼՆԱԶ ՅԵՎ, ԾԱՌԱ.

ԹՅՈՒՆԻ.— (Փողոցից) Շուն շան վորդի, եդ յեզները ուր
ես տանում: (Փայտը ձեռին վազելով գնում է գոմի
կողմը: Համբարձումը, գզիրը և ծառան տնային մի շարք
իրեր վերցրած դուրս են գալիս բակը. միաժամանակ
կարպետի մի ծայրից գզիրն է բռնել, մյուս ծայրից ծառան.
Քաշքշելով դուրս են բերում անից: Իսկ Մայրամը և Գյուլ-
նազը լաց լինելով հետևում են նրանց):

ԳԶԻՐ.— Թո՛ղ...

ԾԱՌԱ.— Չեմ թողնի...

ՀԱՄԲ.— Չթողնաս. եդ կարպետը նրանից առաջ յես եմ
տեսել...

ԳԶԻՐ.— Ինձանից առաջ թե վոր տեհար, ինչի՞ ինձանից
առաջ չվերցրիր: Քեզ ասում եմ, թո՛ղ:

ԾԱՌԱ.— Չեմ թողնի...

ՀԱՄԲ.— Չթողնաս...

ԳԶԻՐ.— Ասում եմ թող, թե չե ձեռիս բաները վեր
կղնեմ, կբռնեմ, եդ երկուսիդ ել ենքան կտամ,
վոր Դանել ադի տան ճամբեն կմոռանաք:

ՀԱՄԲ.— Իրան սեցրու թող տանի. (Ծառան թողնում է):

ԳԶԻՐ.— Բա վոր տալու եյիր, ել ինչի՞ եյիր հարբա-
գորբա անում: (Իրերը հավաքում է դուրս գնում, իսկ

մյուս ծառան գոմի կողմից դուրս է գալիս ցանկապատի մոտ)։

ՄԱՌԱՆ.—Եկեք քոմազ արեք, յեզները անջախ դուրս եյի բերել, Չաքարի հերն յեկավ փաթաթվել ա յեզան վզովը, չի թողնում, թե տանեմ։

ՀԱՄԲ.—Չթողնելու նա ի՞նչ իրավունք ունի. շնորհակալ չի՞, վոր պարտքի տեղ եղ սատկած յեզներն ենք տանում... (Համբարձումը ծառաների հետ գնում է գոմի կողմը, իսկ թյուզին լաց լինելով գալիս է)։

Տ Ե Ս Ի Լ 13

ՉԱՔԱՐ, ՄԱՅՐԱՄ, ԳՅՈՒԼՆԱԶ ՅԵՎ, ՀԵՏՈ ԽԵՉԱՆ

ԹՅՈՒՆԻ.—Ախ իմ մարալ ու ջեյրան յեզներ, ձեզ խըլեցին, տարան... Չաքար ջան, յեզներս տարան, վիզս թարս կտրեցին։

ՉԱՔԱՐ.—Թող տանեն, ա հեր, ել սրանից հետո յեզներն ինչի՞դ ա պետք. ել արտ չունես թե վարես, ցորեն չունես թե ցանես... Արտդ ուրիշի համար եր ցանվում, ցորենդ ուրիշի ամբարն եր լցվում։ (Խեչանը վաղելով ներս է գալիս)։

ԽԵՉԱՆ.—Չաքար, տունդ քանդվի։ Ի՞նչ ես կանգնել, գնա գլխիդ ճարը տես, հրեն քամակիցը գալիս են... Եսորվա քու են խոսքերը նրանց անգաճն ա ընկել... Հըմի վորդի վոր ա նրանք կգան. ել մի ուշանա, տանըցոնց մնաս բարով ասա ու դուրս արի գնա։

ՄԱՅՐԱՄ.—Չաքար ջան... իմ ազիզ բալաս։ (Մայրամը ու Գյուզնազը գրկում են Չաքարին և լաց լինում)։

ՉԱՔԱՐ.—Դե լավ, հանգստացեք, ուր վոր ել գնամ,

հալրաթ մի հացի փող ելա կաշխատեմ, թե՛ յես
կուտեմ, թե ձեզ համար կը դարգեմ...

ՄԱՅՐԱՄ.— Ա մարդ, մենք ել գնանք, ել սւմ համար
ենք մնում, ինչի՞ համար ենք մնում: Չաքարի
հետ մենք ել գնանք, ես շիվան տեղից հեռանանք:

ԹՅՈՒՆԻ.— Մենք չենք կարա, ա կնիկ, չենք կարա:
Դու գնա, Չաքար ջան, գնա, գլուխդ ազատի,
հալրաթ ես յերգիրը մի վախտ խաղաղություն
կնկնի... (Լաց ե լինում):

ՉԱՔԱՐ.— Գնա, ա մեր, գնա, խուրջինս բեր: (Մուկուչը
վազելով ներս ե մտնում):

S T U T L 14

ՆՅՈՒՆԻ ՅԵՎ ՄՈՒԿՈՒՉ

ՄՈՒԿՈՒՉ.— Չաքար, չի թե գնաս:

ՉԱՔԱՐ.— Ի՞նչ կա, ի՞նչ ա սլատահել:

ՄՈՒԿՈՒՉ.— Կարմիր բանակը գալիս ա... Ահ ու դողը
սրանց ջանն ա ընգել, գլուխները կորցրել են,
պատրաստվում են թե փախչեն:

ՉԱՔԱՐ.— Յես նրանց փախչիլ շանց կտամ, դե ել միք
կանգնիլ, նրանց փախչելու ճանապարհները հար-
կավոր ա կտրել, խափանել... Նրանք մեր ձեռքից
չպետք ե ազատվեն... Մեր ես երված դաղված սըր-
տի մուխը քնթներից դեռ դուրս չի եկել... Ա
մեր, խուրջինը թող մնա, ել յես չեմ գնում...
Տղերք, դե ընկեք առաջ... (Չաքար, Մուկուչ ե Խե-
ջան գնում են):

ԹՅՈՒՆԻ.— Ա կնիկ, յես ել եմ գնում... (դուրս են գնում)

ՄԱՅՐԱՄ.—Աղչի, շալս բեր մի գնում տե՛նամ ես ի՞նչ
բան ա:

ԳՅՈՒԼՆԱԶ.—Ա մեր, գնում ես, գնանք, ի՞նչ շալի
վախտ ա: (Դուրս են գնում):

Տ Ե Ս Ի Լ 15

ԳԶԻՐ, ՄԱԹՈՍ, ՎԱՐԺԱՊԵՏ, ՏԻՐԱՅՈՒ ՅԵՎ, ՔԵԹ-
ԽՈՒԴԱ:

ՎԱՐԺԱՊ.—Ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել.

ՄԱԹՈՍ.—Սաղ աշխարհը խմացավ, դու չխմացար:
(Ուզում է գնալ):

ՏԻՐԱՅ.—Կաց, ո՛ւր ես գնում, ախր մեզ մի որինավոր
հասկացրու ու ընենց գնա:

ՄԱԹՈՍ.—Ել հասկացնիլը վճրն ա, բա դուք չեք տես-
նում. ըստեղից ժողովուրդն ա գլուխ վեր քաշել,
ենդեղից ել բալշիկներն են գալի. ահ ու դողը
սրանց ա ընկել, մնացել են յերկու սրի արանքը,
չեն խմանում թե ուր գնան, ինչ անեն... Գլուխ-
ները թամամ կորցրել են... Սրանց մի վոտը
հրեն վակղալումը վագոնի վրա ա, մի վոտը ըստի:

ՏԻՐԱՅ.—Տեր դու փրկյա զմեզ ի չարե (Յերեսը խաշա-
կնքում է):

ՎԱՐԺԱՊ.—Գնանք Դանել աղին հարցնենք, նա ամեն
ինչ կխմանա, նա մի բան կանի:

ՄԱԹՈՍ.—Քաշալը դեղ անիլը վոր խմանա, առաջ իր
գլխին կանի... Բալշիկների գալը նա վոր խմա-
ցել ա, մկան ծակ ա ման գալի, չի գտնում, թե
մանի: Դե հըմի քանի չեն եկել յես ձեզ

խորհուրդ եմ տալու, վոր դուք եղ հարուստներին մոռանաք. թե չե նրանք վոր եկան, եղ հարուստներին հետ ձեզ ել դնելու են կրակի վրա մի թավի մեջ ժարիտ անեն:

ԳՁԻԲ.— Սրա խոսալուն մտիկ, գնանք քյոխովին գլտնենք; սրա լեզուն տակից կարել տանք:

ՄԱԹՈՍ.— Ինչ քյոխովա, ինչ փլան, ինչ փստան, Հայաստանում ետորվանից ել վոչ քյոխովա կա, վոչ գզիր: Վոչ տերտեր կա, վոչ տիրացու: Բալշեվիկները վոր եկան խմբապետների ու զանգինների հետ սրանց ել լցնելու են աղբի քթոցը տանեն դեն ածեն:

ՏԻՐԱՅ.— Ձենդ կտրի, տխմար... Տեր դու փրկյա զմեզ ի չարե:

ՄԱԹՈՍ.— Եղ տխմարի խոսքը սրանից հետո դու ինձ ասելու իրավունք չունես: Ել պրծավ. են վաղ եր, վոր տերտեր տիրացու տեսնելիս գղակներս վերցնում եյինք, յերեսներիս խաչ հանում... Եղ բալշևիկները վոր եկան ձեր ճրագը հանգավ... Ել լիս չի տա:

ՏԻՐԱՅ.— Տեր դու փրկյա զմեզ ի չարե... (Յերեսը խաչ ե հանում):

ՄԱԹՈՍ.— Եղ աղոթքները իրանց ուժն ու գորությունը կորցրել են, ել սրանից հետո վոչինչ չի ոգնի. հեղափոխություն ա, տիրացու, հեղափոխություն... Հրեն կարմիր դրոշակներով գալիս են, քաշվեք նրանց ճանապարհ տվեք: (Վազում ե նրանց միանում: Դրոշակներով ժողովուրդը մտնում ե բեմ: Մինասը կարմիր բանակայինի հագուստով: Բեմի հետևից

լափում են ցնծութեան աղաղակներ, յերաժշտախումբը նվա-
զում և «խնտերնացիոնալ»):

ՉԱՔԱՐ.— Կեցցե՛ք Խորհրդային Հայաստանը...

ՄԻՆԱՍ.— Կեցցե՛ք Հոկտեմբերյան հեղափոխութեանը...

ԲՈՂՈՐԸ.— Կեցցե՛ք Կարմիր բանակը:— Ուռումն...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Վ Ե Ր Զ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045297